Հարցերը կապված են եղել եկեղեցու հետ, Էրդողանի գիրքը կարդալու, անհարմար վիճակ է ստեղծվել վարչապետի համար: Որեւէ մեկին թույլ չեն տվել հեռախոսով ներս գնալ: Մենք մեր մտահոգությունները ներկայացրել ենք վարչապետին՝ իր վարած քաղաքականության առթիվ: Երեւի միայն Սովետի տարիներին էին սրբազաններ բանտարկվում:

Կարդացեք՝ էջ 4



Փաշինյանական իշխանության 2 քարոզչիչ՝ «Հանրապետություն» կոչվող կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը եւ Հանրային կոչվող հեռուստաընկերության լրագրող Պետրոս Ղազարյանը, ամփոփում են տարին եւ բացահայտում Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ իրականացվող իշխանական քաղաքականության իրական նպատակը՝ քանդել եկեղեցին:

Կարդացեք՝ էջ 5

Ուղիղ հեռարձակմամբ հետեւում էի, տեսա, որ 10 եպիսկոպոսների առաջնորդությամբ այնտեղ գնացած մարդիկ ծամոն էին ծամում, ձեռքի միջնամատն էին ցույց տալիս, ոմանք հարբած էին: Գիտեք, շատ վատ է, որ նման կեղտոտ խավին իրավունք են տալիս ինչ-որ հարց որոշել: Իսկ հետագա զարգացումների մասով, Աստված տա, որ սխալվեմ:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 212 (4113), 25 դեկտեմբեր, հինգշաբթի, 2025

www.hraparak.am

Նախօրեին գրել էինք, որ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հիմնադրած ՀԱԿ-ում քաղաքական ուժերի հետ անցկացված կոնսուլտացիաներից հետո եկել են այն եզրահանգման, որ միայնակ են մասնակցելու 2026 թ. ընտրություններին, միեւնույն ժամանակ՝ բաց են համագործակցության համար այլ ուժերի եւ անհատների հետ: ՀԱԿ-ում կարծում են՝ եթե միավորում, ապա իրենց առանցքի շուրջ: Կուսակցությունն ուրբաթ օրը Holiday Inn հյուրանոցում նախատոնական միջոցառում է անցկացնելու, որի ընթացքում Կոնգրեսը կհայտարարի 2026 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցության ձեւաչափի եւ վարչապետի թեկնածուի մասին: Որոշ տեղեկություններով՝ ձեւաչափը միայնակ մասնակցելն է, իսկ վարչապետի թեկնածուն՝ ՀԱԿ փոխնախագահ Լեւոն Զուրաբյանը: Փորձեցինք այս տեղեկության վերաբերյալ մեկնաբանություն ստանալ ՀԱԿ անդամ Արամ Մանուկյանից, սակայն նա հարցը լսելուն պես հանկարծակիի եկավ ու պատասխանեց. «Չեղավ, չեղավ»: Ապա հորդորեց մասնակցել միջոցառմանը, որտեղ ամեն բան պարզ կլինի: Փաստորեն, չէք հերքում: Մանուկյանն անդրդվելի մնաց՝ կրկին հորդորելով մասնակցել միջոցառմանը: Հիշեցնենք, որ կուսակցությունների մասնակցության դեպքում ընտրագրավի չափը 7,5 մլն դրամ է, դաշինքների դեպքում՝ 15 մլն: Եթե սրան գումարենք նաեւ քարոզչության համար անհրաժեշտ գումարները, ապա կստացվի, որ ընտրություններին մասնակցելը թանկ հաճույք է:

Արցախցիների եւ ոչ միայն նրանց համար, անհասկանալի է մնում՝ ինչպես կարող էր Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը համագործակցել Արցախը հանձնած Նիկոլ Փաշինյանի հետ: Մենք գրել էինք, որ նրան սպառնացել են զրկել ծառայողական բնակարանից, որը տրամադրել են որպես ՀՈՒ հոգեւոր առաջնորդ՝ ՀՀ ՊՆ-ից: Շատերին այս վարկածն անհավանական է թվում՝ միթե կարելի է մեկ բնակարանի համար նման դավաճանության գնալ: Պատմում են, որ միայն բնակարանը չէ հարցը, այլ Արցախի թեմի առաջնորդն իր վախերի պատանդն է դարձել, նրան ճանաչողները պատմում են, որ նա երբեք քաջությամբ աչքի չի ընկել: Օրինակ՝ 1989-1994 թթ., երբ եղել է Ամարասի վանահայրը, կռվի թեժ պահերին ժողովրդին թողել փախել է: Ամարաս Զորակի բնակիչներից մեկը պատմեց՝ կռվի թեժ պահերին փոխանակ գար, զորքին դուխ տար, անհետացել էր: Անգամ երբ տեղյակ են պահել, որ Ամարասը մեր լիակատար վերահսկողության տակ է, նա տեւական ժամանակ եկեղեցի չի վերադարձել: Իսկ հեռանալիս էլ իր հետ տարել է եկեղեցական սպասքը՝ խնկաման, խաչ եւ այլն:

Վարկաբեկում

Վերջին տարիներին իրականացվող քաղաքական հետապնդումների, անմեղ մարդկանց շինծու մեղադրանքներով, իսկ իրականում՝ Նիկոլ Փաշինյանի հրահանգով կալանավորելու ու դատելու ամենաբացասական կողմն այն է, որ այլեւս ոչ ոք չի հավատում քննչական մարմինների հարուցած, քննած վարույթներին, այդ վարույթներով անցնող մարդկանց մեղավորությանը: Իրավապահ համակարգն ինքն իրեն այնքան է վարկաբեկել, որ ոչ մի հաղորդագրության, ոչ մի վարույթի, ոչ մի մեղադրանքի ու դատավճռի հասարակությունն այլեւս լուրջ չի վերաբերվում: Անգամ այն մեղադրանքներին, որոնցում քաղաքական կոմպոնենտ չկա: Որովհետեւ, երբ քննիչը, դատավորը, դատախազը մեղք են գործում իրավաբանության դեմ, եւ մեկ անմեղ նախադասություն արտասանած գործարարին 7 ամիս պահում են բանտում, երբ 8 տարի առաջ ինչ-որ մեկի ուսապարկում գտած թմրանյութի համար Փաշինյանի չսիրած սրբազանին են կալանավորում, երբ իշխանափոխության շարժում ձեռնարկած մեկ այլ սրբազանի են մեղադրանք առաջադրում, այլեւս ոչ ոք չի հավատում, որ այդ նույն քննիչը, դատավորն ու դատախազն ի վիճակի են նորմալ գործ քննելու, օբյեկտիվ մեղադրանք առաջադրելու կամ դատավճիռ կայացնելու: Իր կամքով ու քմահաճույքով գործեր հարուցող իրավապահներին Նիկոլ Փաշինյանը շատ վատ «ծառայություն» մատուցեց՝ հեղինակազրկեց նրանց աշխատանքն ու վարկաբեկեց նրանց կառույցները, որոնք արդարադատություն իրականացնելու պարտականություն ունեին երկրում: Այդ կառույցները դարձրեց վարչապետին կից գրասենյակներ, որոնց ղեկավարներն իր ենթականերն են՝ հակառակորդների դեմ պայքարում իր օգնականները: Ուստի մարդիկ չեն հավատում ոչ միայն նախկին, այլեւ անգամ ներկա իշխանության ներկայացուցիչների դեմ հարուցված վարույթներին՝ Դիանա Գասպարյան, ՊԵԿ նախկին նախագահ Վարդան Միրումյան:

Չնայած ՔՊ-ում որոշ խմբեր տեւական ժամանակ կատաղի պայքար էին մղում Անդրանիկ Քոչարյանի դեմ, սակայն նախօրեին ՔՊ վարչությունը գրանցել է նրա թեկնածությունը՝ ՔՊ հաջորդ պառլամենտի թեկնածուների թվում: ԱԺ պաշտպանության հանձնաժողովի նախագահը նախընտրական ցուցակում ընդգրկվելու հայտը ներկայացրել է անկուսակցականի կարգավիճակում եւ պետք է մեկուկես միլիոն դրամ վճարի «օբշակին»: Նրան երաշխավորել է ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը՝ անկուսակցականների դեպքում երաշխավորությունը պարտադիր պայման է, իշխող ուժի սահմանած կանոնների համաձայն: Սակայն թե որ հորիզոնականում կհանգրվանի Անդրանիկ Քոչարյանը, որքանով այդ հորիզոնականն անցողիկ կլինի, պարզ կդառնա միայն ՔՊ համաժողովից հետո, երբ ավելի քան հազար պատվիրակների քվեարկության արդյունքում կձեւավորվի ընտրացուցակի հերթականությունը:

ԱՐԳԵԼԵԼ ԵՆ ՄՈՏԵՆԱԼ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐԻ ՏՆԵՐԻՆ

Շենգավիթ վարչական շրջանի նախկին ղեկավար, ՔՊ նախկին անդամ Ռազմիկ Մկրտչյանի գործը դատարանում է: Նա մեղադրվում է մի խումբ այլ անձանց հետ իր կուսակցին՝ Տիգրան Մակարյանին, ֆիզիկական ուժեղ ցավ եւ հոգեկան տառապանք պատճառելու համար: Նախկին թաղապետը, մեզ հետ զրույցում անդրադառնալով իր նկատմամբ առաջադրված մեղադրանքին, ասաց. «Չեմ կարծում՝ լինեմ միակը, որ միայն չափալախելու համար նստեմ, անգամ թեթեւ մարմնական վնասվածք չունի: Եթե մարդուն ծեծեի, ձեռը ջարդեի, ծանր մարմնական լիներ, էլի չէի նստելու»: Այսինքն՝ միայն «չափալախելու» համար 2 ամիս բանտային կալանք եք կրել: «2 ամիս կալանքը, ըստ մեկնաբանման, բացառապես նրա համար էր, որ պատգամավորներին (ՔՊ-ական պատգամավորների մասին է խոսքը՝ խմբ.) կամ նույն անձին նորից չծեծեմ կամ որեւէ գործողություն չանեմ: Իմ վրա արգելք կա, որ ես պատգամավորների չծեծեմ, հանկարծ չգնամ՝ հաշվեհարդար տեսնեմ կամ այլ գործողություն չանեմ»: Կոնկրետ ո՞ր պատգամավորների մասին է խոսքը: Ասաց, որ չգիտի՝ դատարանի որոշման մեջ անունները նշվում են, թե ոչ, սակայն գիտի, թե ում մասին է խոսքը. «Կարծում եմ՝ կարիք չկա, որ ասեմ: Իմ սահմանափակումն իրենց տան մոտ, իրենց մոտ չգտնվելն է: Դատարանում բանավոր կերպով դա է խոսակցությունը եղել: Անկեղծ ասած, որոշմանը չեմ ծանոթացել՝ այնքան անհետաքրքիր է»:

ԵԹԵ ՁԵՐ ՀՈՐ ՎՐԱ ԻՆՉ-ՈՐ ՄԱՐԴԻԿ ԿՌԻՎ ԳԱՆ, ԱՐԴՅՈ՞Ք ՆԱ ԻՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԿՆԵՐՔԱՇԻ ԿՌՎԻ ՄԵՋ

*«Հրապարակի» զրուցակիցն **Արտաշես սարկավագ Աջապահյանն** է:*

- Մի քանի օր է՝ տեղեկություններ են շրջանառվում, որ այս կիրակի՝ դեկտեմբերի 28-ին, Նիկոլ Փաշինյանն իր «շրջիկ կրկեսով» փորձելու է մայր տաճարում պատարագ անել: Պարզ է, որ նպատակը մեկն է՝ քայքայել ու պղծել Հայ առաքելական եկեղեցին, որպեսզի Բաբվի հավանությունը ստանա: Ի՞նչ եք կարծում՝ այս անգամ ինչի՞ են ուզում հասնել նրանք, եթե հաշվի առնենք, որ նախորդ անգամները մարդիկ ինքնաբուխ եկել էին եկեղեցուն պաշտպանելու, այլ ոչ թե Փաշինյանի կողքը կանգնելու: Ի՞նչ եք կարծում՝ չարժե՞, որ Վեհափառն այս անգամ գոնե դիմի հավատավոր զանգվածին, որպեսզի աջակցեն, սատար կանգնեն եկեղեցուն.... Երբ նման ակցիաներ քաղաքական ուժերն են կազմակերպում, դա քաղաքական պայքարի է նման, իսկ եթե դա անի եկեղեցին, ընկալումը կլինի այլ:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

- Քաղաքական ուժերը՝ ամեն մեկն իր հնարավորությունների չափով ակցիա է կազմակերպում՝ իր համար, բայց Հայ առաքելական եկեղեցու հոտը պետք է մի բան հասկանա, որ, անկախ այն բանից՝ անդամակցո՞ւմ է ինչ-որ կուսակցությունների կամ սատար՞ում է ինչ-ինչ ուժերի, թե ոչ, ինքը մնում է որպես Առաքելական եկեղեցու հոտ եւ ինչ-որ չափով պարտավոր է վտանգների դեպքում պաշտպանել իր եկեղեցին, իր սրբությունները, որոնք դարերի ընթացքում մշտապես եղել են ազգապահպանության սյունը: Սա է ողջ հարցը: Մեր ժողովուրը պիտի գիտակցի, որ արտաքին ուժերին ծառայող այս փոքր խմբակը, որն իսկապես շատ փոքր է, թեպետ ուզում է համառորեն ներկայանալ ողջ ժողովրդի անունից, ծառայում է օտարի շահերին: Ոչ մի առումով այս մարդիկ ոչ մի կապ չունեն քրիստոնեության հետ: Անգամ իրենց նիստուկացով, իրենց ընտանեկան կարգավիճակով քրիստոնեական արժեքներին մոտ չեն: Ամեն ինչով նրանք հեռու են հայ ժողովրդից: Ժողովրդի մեջ մի փոքր գոյացություն են, խաժամուժ, որը ոչ մի իրավունք չունի ժողովրդին առաջնորդելու: Այդ խաժամուժը ոչ միայն չի կարող միջամտել հոգեւոր կյանքին, այլեւ անգամ աշխարհիկ կյանքում չի կարող ազդեցություն ունենալ: Ցանկացած ազգ առաջնորդ է ընտրում նրան, ով կլինի ազգային մտածողությամբ, հայրենասեր, ազնիվ, սակայն մենք այսօր ապրում ենք մի իրականության մեջ, որտեղ կա իբրեւ իշխանություն, որն ապրում է մեր արժեքներին ու կրոնին լրիվ հակառակ: Ինչ-որ անհասկանալի ձեւով իշխանության են եկել, բայց այժմ չունեն ո՛չ լեգիտիմություն, ո՛չ էլ վստահություն՝ հանրության կողմից: Գործ ունենք օտարի իշխանությունների հետ: Մեր հավատքին, մեր ապրելակերպին, մեր փիլիսոփայությանը դեմ մարդիկ են նրանք:

- Բայց, ամեն դեպքում, ունեն իշխանական ռեսուրսներ, ուժայիններ, իրավապահ մարմինները ստրկամտորեն ծառայում են նրանց: Այս հանգամանքները հաշվի առնելով, ի՞նչ եք կարծում՝ չարժե՞ դիմել հանրության հավատավոր շերտին, որպեսզի սատար կանգնեն եկեղեցուն:

- Ձեր հարցին հետեւյալ կերպ կպատասխանեմ. պատկերացրեք՝ Ձեր հոր վրա դրսից ինչ-որ մարդիկ են գալիս կռիվ, արդյո՞ք Ձեր հայրը իր երեխաներին կցանկանա ներքաշել այդ կռվի մեջ՝ գիտակցելով, որ այդ երեխաները չունեն մեծ ռեսուրսներ, հզոր չեն եւ այլն: Եկեղեցու դիրքորոշումն էլ այդպիսին է: Փորձում է իր զավակներին հնարավորինս հեռու պահել վտանգներից, այդ պատճառով էլ ոչինչ չի անում՝ իր սիրուց ելնելով: Եկեղեցին այդ խաչը միայնակ է տանում, միայն թե իր հավատավոր զավակները չվնասվեն, թեպետ այդ զավակները չափահասություն պետք է դրսեւորեն ու իրենց կամքով գան, կանգնեն եկեղեցու կողքին՝ առանց հրավերի սպասելու: Երբ մենք տեսնենք, որ մեր ծնողի վրա հարձակվում են, չենք սպասելու, չէ՞, որ ծնողը մեզ օգնության կանչի, ասի՝ եկեք ինձ փրկելու: Իսկ այդ դեպքում ինչո՞ւ ենք հիմա հատուկ հրավերի սպասում: Անգամ անչափահաս լինելն այս պարագայում արդարացում չէ: Անգամ երեք տարեկան երեխան, երբ տեսնում է, որ ծնողին վնասում են, իր փոքրիկ ուժերը ներդնում է, որպեսզի ծնողին սատար կանգնի: Իրապես ամոթալի կլինի առաքելական եկեղեցու հետեւորդի համար, որ անհաղորդ նստի ու դիտի այս ամենը՝ կողքից, չմասնակցելով իր ծնողի՝ հոգեւոր հորը սատարելու գործին:

- Կիրակի օրը, ավանդույթի համաձայն, Մայր Աթոռում Սուրբ պատարագ է տեղի ունենալու: Տեղեկացանք, որ այն մատուցելու է Հայր Զաքարիան: Ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ տեղի կունենա, եթե այդ անբարեկիրթ զանգվածը սուլոցներով ու գռեհիկ վանկարկումներով գա ու ներխուժի տաճար:

- Նրանք հազար ու մի անշնորհքություն կարող են անել, իմ երեւակայությունը չի բավականացնում՝ պատկերացնելու համար, թե նրանք ինչ լկտիությունների ու լպիրշությունների են ընդունակ, սակայն մենք պետք է հասկանանք, որ նրանց ասած պատարագը ոչ մի կապ չունի իրական պատարագ ասվածի հետ: Նրանցը չաղոթելու, աղոթքին հակադրվելու միջոցառում է, որը կազմակերպում են եկեղեցիներում: Նրանց գլխավոր նախապայմանը Վեհափառի համար չաղոթելն է: Եթե իրենք քրիստոնյա են, իսկ քրիստոնեությունը մեզ սովորեցնում է աղոթել անգամ թշնամիների համար, այդ ինչպե՞ս է ստացվում, որ ինչ-որ մի խմբակ, որն ինքն իրեն քրիստոնյա է համարում, շեղվում է Քրիստոսի խոսքից եւ հրաժարվում է աղոթել Վեհափառի համար: Դրա համար մենք պետք է միանշանակ ֆիքսենք, որ այդ մարդիկ քրիստոնյա չեն: Նրանց վարքը կապ չունի քրիստոնյա մարդու վարքի հետ: Քրիստոսն ասում է՝ դատաստանի օրը շատերն են ասելու՝ տեր-տեր, սակայն ես ասելու եմ՝ երբ հիվանդ էի, ինձ այցի չեկաք... ջուր չտվեցիք: Այս մարդիկ եթե հրաժարվում են աղոթել, ապա հրաժարվում են աղոթել Աստծո համար: Աստծուն չծառայող տարրեր են նրանք: Մեր ժողովուրդը պետք է հասկանա, որ պատարագն իշխանության համար ապօրինությունների քող է: Եկեղեցաքանդ շարժումը հակաաստվածային է, եկեղեցու դեմ պայքարողը պայքարում է Աստծո դեմ: Աղոթքի դեմ պայքարողն ինչպե՞ս կարող է եկեղեցու համար մտածել: Սա ինչ-որ մի չաղոթողների աղանդ է: Լպիրշների ու լկտիների այս խումբը երբեք եկեղեցի չի մտել ու չունի հաղորդության գիտակցում: Նույնիսկ այս 10 եպիսկոպոսները սրտով եկեղեցում չեն եղել այս տարիներին, էլ ուր մնաց՝ այդ ամբոխը:

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ ՇԱՏ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ, ԵՎ ԴԱ ԼԻՆԵԼՈՒ Է ԶՍՊԱՇԱՊԻԿ



«Վարչապետը յուրաքանչյուր կիրակի մասնակցում է պատարագին»,- նախօրեին հայտարարել էր ՀՀ վարչապետի մամուլի խոսնակ Նազելի Բաղդասարյանը՝ անդրադառնալով այն հրապարակումներին, թե առաջիկա կիրակի Փաշինյանը պատարագի է մասնակցելու Էջմիածնի մայր տաճարում: Հիշեցնենք. օրեր առաջ լրատվամիջոցները գրեցին, որ Փաշինյանը ծրագրում է իր կողմնակիցների, տիրադավ եպիսկոպոսների եւ կարգալույծ նախկին հոգեւորականների ուղեկցությամբ՝ այս կիրակի «ներխուժել» Մայր Աթոռ, մասնակցել պատարագի ու ավարտին հասցնել իր ծրագիրը՝ Ամենայն հայոց կաթողիկոսին հեռացնել վեհարանից, այնպես անել, որ նա «հանգստի կոչվի»: Չնայած Փաշինյանի մամուլի խոսնակը դա հերքել էր. «Առաջիկա կիրակի օրվա պատարագի վայրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն կհաղորդվի: Հոդվածում վկայակոչված մնացյալ տեղեկատվությունն իրականությանը չի համապատասխանում»: Նշենք, որ նախորդ կիրակի շրջիկ պատարագասերների խումբը հերթական «պատարագին» չմասնակցեց, քանի որ Փաշինյանն աշխատանքային այցով ՌԴ էր մեկնել: Իսկ նախօրեին Հայր Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյանը Ֆեյսբուքի իր էջում գրել էր, որ այս կիրակի ինքն է մայր տաճարում սուրբ պատարագ մատուցելու, եւ գրել էր, որ իրեն դիմում են տարբեր մարդիկ եւ ասում, որ իրենց անունները, կիրակի օրվան ընդառաջ, իշխանականները հավաքագրում են, որպեսզի իշխանական գրոհայինների բանակ կազմեն: «Հրապարակը» զրուցել է **Հայր Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյանի** հետ:

- Կիրակի օրը Դուք եք մատուցելու պատարագը մայր տաճարում: Իշխանականները, կարծես, պատրաստվում են այս կիրակի մայր տաճարը գրոհել: Ինչպե՞ս եք պատկերացնում այդ ամենը: Ի՞նչ քայլերի պետք է դիմեք, եթե նման բան տեղի ունենա:

- Այս կիրակի, այո, իմ պատարագ մատուցելու հերթն է: Ինչ վերաբերում է նրանց գալուն, ապա ի՞նչ պիտի լինի, ի՞նչ անենք....

- Այդ թափառաշրջիկ խումբն աչքի է ընկնում խուլիգանական վարքագծով՝ սուլոցներ, հայհոյանքներ, քաշքշուկ եւ այլն....

- Ի՞նչ պետք է անեմ: Ես մատուցելու եմ պատարագ՝ խորանի վրա, ես ոչինչ էլ չեմ կարող անել: Սովորականի պես ես պատարագ եմ մատուցելու:

- Իսկ չե՞ք կարծում՝ արժե, որ եկեղեցին դիմի հավատավոր ժողովրդին, որպեսզի աջակցեն Հայ առաքելական եկեղեցուն:

- Այդ հարցին ես չեմ կարողանա պատասխանել հստակ, ես ամեն դեպքում ոչ մի լուրջ խնդիր չեմ տեսնում, ոչ մի բան էլ տեղի չի ունենալու, նորմալ պատարագ է լինելու: Իմաստ չունի ժողովրդին դիմելու, չեմ կարծում, թե ինչ-որ լուրջ բան լինի: Տարվա վերջին պատարագն է լինելու, մարդիկ սովորաբար գալիս են վերջին պատարագին, որպեսզի օրհնություն ստանան....

- Կարծում եք՝ իշխանական այդ փոքր խումբն ի՞նչ է այդ նպատակով գալու:

- Ես կարծում եմ, որ մեր հավատացյալներն ավելի շատ են լինելու, եւ այն լինելու է իշխանության համար զսպաշապիկ:

- Հավաքագրումների մասին էիք գրել, մի փոքր մանրամասնեք, խնդրեմ, թե ինչի մասին է խոսքը, ինչ տեղեկություններ ունեք:

- Կա նման տեղեկություն, որ հավաքագրումներ են անում, թեպետ այսօր նոր բան չեմ իմացել:

- Իսկ կոնկրետ ի՞նչ շրջանակների են հավաքագրում:

- Շատ տարբեր:

- Ուսուցիչներ, մարզպետարանի աշխատողներ, մանկապարտեզների աշխատակիցներ ներգրավո՞ւմ են:

- Բնականաբար: Նախորդ անգամ էլ կային ուսուցիչներ, ինչպես նաեւ՝ բժշկական հաստատությունների աշխատակիցներ, մի խոսքով՝ այն, ինչ իրենք ունեն՝ պետական ռեսուրս:

- Ի՞նչ եք կարծում՝ այս քայլերով ինչի՞ են փորձում հասնել իշխանավորները, ո՞րն է նրանց նպատակը:

- Որեւէ հարց չեն լուծում: Նույն մարդիկ այս եկեղեցում են, այն եկեղեցում են, եւ այսպես շարունակ, բայց դրանով հարց չեն լուծում: Վեհափառն ամուր պետք է իր դիրքերում մնա: Եկեղեցական հարցերը լուծվել են, լուծվում են եւ լուծվելու են կանոնակարգերին համապատասխան՝ առանց արտաքին ճնշումների:

ԼՈՒՍԻՆ

Ա

ՈՎՔԵՐ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ԱԼԻԵՎԻ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼ, ՆՐԱՆՑԻՑ ՀԱՐՑՐԵՔ

ախօրեին, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, տեղի է ունեցել Սահմանադրական բարեփոխումների խորհրդի հերթական նիստը, այս անգամ՝ ընդլայնված կազմով, որին, խորհրդի անդամներից բացի, մասնակցել են նաեւ փոխվարչապետերը: Նիստի վերաբերյալ կառավարությունը մի հերթապահ հաղորդագրություն էր տարածել. «...Մանրամասներ են ներկայացվել իշխանությունների լիարժեք հավասարակշռման եւ փոխզսպման մեխանիզմների ամրապնդման, իրավական կառուցակարգերի հետագա կատարելագործման, հանրային կառավարման ինստիտուտների արդյունավետության բարձրացման, ինչպես նաեւ՝ սահմանադրական ինստիտուտների կայունության եւ գործունակության ապահովմանն ուղղված կարգավորումների վերաբերյալ»: Նշվում է, որ սահմանադրական կարգավորումների վերանայմանն առնչվող հարցերի շրջանակում ծավալվել է մտքերի փոխանակություն, ներկայացվել են դիտարկումներ եւ առաջարկություններ՝ սահմանադրական սկզբունքների, իրավական կանխատեսելիության, ինչպես նաեւ՝ իրավական պետության ամրապնդման տեսանկյունից:

Չնայած Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Հայաստանը նոր սահմանադրություն կընդունի 2026 թվականի ընտրություններից հետո, սակայն կան տեղեկություններ, որ խնդիր է դրված՝ մինչեւ ընտրությունները հանրությանը ներկայացնել նոր սահմանադրության հայեցակարգը, իհարկե՝ ոչ ամբողջական, այլ՝ նյուանսներով, որը նաեւ Ալիեւի պահանջն է: Ըստ այդմ, ինչ-որ պուպուշ տեքստ կիրամցնեն, որ փարատեն հանրության մտահոգությունները, թե Ալիեւի պահանջը չենք կատարում, որպեսզի մոլորեցնելով հանրությանը՝ ընտրություններին կարողանան վերարտադրվել: Իսկ դրանից հետո նոր սահմանադրության ընդունումը կդառնա մեխանիկական հարց, եւ ընտրություններում եթե հաղթեն, ապա կգնան ամեն քայլի, որ անցկացնեն սահմանադրությունը, եթե պետք լինի, անգամ լցոնումների միջոցով այն կընդունեն: Ի դեպ, մոտ երկու շաբաթ առաջ արդարադատության փոխնախարարը խորհրդարանում հայտարարեց, որ Սահմանադրության տեքստից Հռչակագիրը հանելու հարցին դեռ չեն հասել: Մինչդեռ բոլորս գիտենք, որ Հռչակագրից հրաժարվելը Սահմանադրությունը փոխելու գլխավոր իմաստն է, իբրեւ թե՝ տարածքային հավակնություններից հրաժարվելու, Արցախի եւ ցեղասպանության ճանաչման մասին հիշատակումները հանելու նպատակով:

Ինչպես հայտնի է, Ալիեւն իբրեւ խաղաղության պայմանագրի ստորագրման նախապայման է համարում ՀՀ սահմանադրությունը փոխելը եւ Վաշինգտոնում խաղաղության համաձայնագրի նախաստորագրումից հետո հայտարարեց, որ Հայաստանն ունի իր տնային առաջադրանքները: «Ինչպես ձեզ հայտնի է, Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջների առկայությունը, որոնք ամրագրված են Հայաստանի սահմանադրությամբ, թույլ չտվեց այսօր խաղաղության համաձայնագիր ստորագրել: Սակայն համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո համաձայնագիրը կարող է ստորագրվել ցանկացած ժամանակ»,- ասաց նա:

Ադրբեջանի նախագահը մինչ այդ էլ այդ մասին համառորեն պահանջ էր ներկայացնում, սակայն, ըստ ամենայնի, Փաշինյանին հաջողվեց համոզել նրան, որ այդպիսի փոփոխության կարելի է գնալ միայն իր իշխանության վերարտադրությունից հետո, հակառակ դեպքում հանրությունը կտրականապես կտապալի այդ հանրաքվեն: «Կարեւոր է, որ նոր սահմանադրության ընդունման հանրաքվեն կայանա 2026 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո: Դա կարեւոր է, որպեսզի քաղաքական ուժերը հասարակությանը ներկայացնեն տվյալ հարցի վերաբերյալ իրենց տեսակետները, իսկ արդեն ձայների մեծամասնությունը ստացած ուժի դիրքորոշումը վճռորոշ նշանակություն կունենա նոր սահմանադրության նախագծի ձեւավորման գործում»,- նոյեմբերի 22-ին պետական ծառայողների մասնակցությամբ հավաքի ժամանակ այդ մասին գրեթե բաց տեքստով հայտարարեց Փաշինյանը: Վերջերս էլ նոր սահմանադրություն ընդունելու մի նոր բացատրություն տվեց. «Այսօրվա Հայաստանի սահմանադրությունը եւ իրավակարգը նույնքան ատելի է մեր ժողովրդի համար, ինչքան ատելի է եղել նախկիններում»:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ղեկավար **Էդմոն Մարուքյանը**, որը Սահմանադրական բարեփոխումների խորհրդի անդամ է, այս անգամ էլ չի մասնակցել նախօրեի նիստին: «Ալիեւի հայտնի հայտարարությունից հետո, որ Հայաստանը տնային աշխատանք ունի եւ պետք է գնա տնային աշխատանքը կատարի՝ Սահմանադրությունը փոխի, նորն ընդունի, ես այդ նիստերին չեմ մասնակցում»,- բացատրեց նա՝ հավելելով. «Ես չեմ պատրաստվում Ալիեւի տնային աշխատանքը կատարել, ովքեր մասնակցում են, նրանցից հարցրեք»: Խորհրդի կազմում, հիշեցնենք, Փաշինյանի թիմակիցներն են եւ նրա համախոհները, որոնց համար ոչ մի խնդիր չէ Ալիեւի առաջադրանքները կատարելը:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՉԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻ ՄԻԱՅՆ ԳՈՐԾՈՂ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ

2026-ի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ, քաղաքական դաշտում խմորումների փուլ է՝ բանակցություններ, քննարկումներ, նոր ֆորմատների ձեւավորում: Վերջին մի քանի ՏԻՄ ընտրությունները՝ Գյումրիում, Էջմիածնում, ցույց տվեցին, որ ընդդիմության համախմբվածությունը միայն կարող է հաջողություն բերել, իսկ պառակտվածությունը բերում է ձայների փոշիացման, ձախողման, ընտրողի հիասթափության: Քաղաքական ուժերը, հավանաբար, Ամանորից հետո ավելի ակտիվ քննարկումներ կսկսեն այս ուղղությամբ:

«Ապրելու երկիր» կուսակցությունը կարծես թե բոլոր ֆորմատներով եւ բոլոր կուսակցությունների հետ միավորվելու պոտենցիալ ունի: Խոսակցություններ կան, որ նրանց հետ միանալ պատրաստ են ՀԱԿ-ը, Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը, Արման Թաթոյանի «Միասնության թեւերը», անգամ՝ «Մեր ձեւով»-ը: Զրուցել ենք «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր **Մեսրոպ Առաքելյանի** հետ:

- Նախընտրական խմորումները սկսվել են: Տարբեր ուժեր հանդիպումներ են ունենում, քննարկում են իրենց անելիքները: Հետաքրքիր է՝ դուք ի՞նչ ծրագրեր ունեք, ո՞ր ուժերի հետ եք հանդիպում, ի՞նչ եք քննարկում:

- Այո, մենք եւս անմասն չենք այդ խմորումներից: Տարբեր ուժերի հետ ունենում ենք տարբեր քննարկումներ, ինչը նոր չի սկսվել: Մեզ համար ընտրությունների համար համագործակցելն ինքնանպատակ չէ: Մենք դիտարկում ենք համագործակցություն՝ երկարաժամկետ նպատակով, որպեսզի երկրի առջեւ ծառացած խնդիրները լուծենք համատեղ ուժերով: Վստահ ենք, որ այն խնդիրները, որոնք առկա են եւ որոնք դեռ սպասվում են, մեկ մարդու կողմից լուծվելու ենթակա չեն: Քաղաքական դաշտում կան քաղաքական կուսակցություններ, անհատներ, ովքեր ի զորու են պատասխանատվություն վերցնելու այդ պայքարում, եւ այդ ամենի շրջանակներում մենք տարբեր ուժերի հետ քննարկումներ ենք ունենում: Քանի որ այս պահին չունենք վերջնական որոշում, զերծ կմնամ անուններ տալուց, սակայն մենք անում ենք ամեն բան, որպեսզի արդյունավետ, ընտրողների համար ընդունելի եւ վստահելի միավորում ձեւավորենք:

- Այսինքն՝ այն կարծիքին եք, որ ընտրություններին մենակ մասնակցելն անիմաստ է, պետք է կոալիցիաների գնալ:

- Ամեն դեպքում, մենք հակված ենք համագործակցության գնալ: Թե ինչպես կմասնակցենք ընտրություններին, դա արդեն տեխնիկական հարց է: Առաջնայինը բովանդակային մասն է՝ հնարավոր համագործակցություններ ձեւավորելու:

- Դեռ վաղուց տեղեկություններ կային, որ ՀԱԿ-ի հետ եք պատրաստվում ընտրություններին մասնակցել:

- Տարբեր ուժերի, այդ թվում՝ ՀԱԿ-ի հետ ունենք լավ հարաբերություններ եւ ունենում ենք շփումներ: Բայց քանի որ քննարկումները դեռեւս շարունակվում են, եկեք չկոնկրետանանք մեկ ուժի վրա:

- Չկա՞մ մտավախություն, որ իշխանությունները կարող են Մոլդովայի օրինակը կրկնել եւ խոչընդոտել ընդդիմադիր ուժերի մասնակցությունն ընտրություններին:

- Իշխանություններից ամեն ինչ սպասելի է: Սակայն քաղաքական դաշտում առկա ուժերը պետք է լինեն այս առումով ուշադիր, թեպետ ես չեմ կարող ողջ քաղաքական դաշտի անունից խոսել: Մեր կուսակցությունն արդեն չորս տարի է՝ ընտրություններին մասնակցում է, եւ այդ տեսանկյունից մենք չունենք մասնակցելու խնդիր, հետեւաբար, ես չեմ կարող մնացած ուժերի մասին հստակ խոսել: Եթե հարցին նայում ենք քաղաքական տեսանկյունից, ապա ակնհայտ է, որ իշխանությունները բացահայտ բացասական վերաբերմունք ունեն ընդդիմադիր ուժերի նկատմամբ եւ պատրաստ են ամեն հնարավոր քայլի:

- Կա՞մն ուժեր, որոնց հետ ձեր համագործակցությունը բացառում եք:

- Գործող իշխանությունների եւ խորհրդարանական ընդդիմության հետ համագործակցությունը բացառում ենք:

- Ելնելով քաղաքական դաշտի առկա պատկերից, ի՞նչ եք կարծում՝ հնարավո՞ր է ընտրությունների արդյունքում հեռացնել Փաշինյանին:

- Կարծում եմ՝ այո: Թեպետ իշխանություններն ունեն վատ վարքագիծ, սակայն լավ է, որ հանրության մեծ մասն արդեն դեմ է այս իշխանություններին: Արդյունավետ աշխատանքի արդյունքում ընդդիմադիր ուժերը կկարողանան իշխանափոխություն կատարել: Թեպետ մենք այն կարծիքին ենք, որ ոչ մի ուժի չի հաջողվելու միաձայն հաջողության հասնել, սակայն մի քանի ուժեր, ովքեր կհավաքեն բարձր քանակի ձայներ, կարող են ՔՊ-ին իշխանազրկել: Ժողովրդավարության տեսանկյունից շատ կարեւոր է, որ Հայաստանում ընտրությունների միջոցով վերջապես իշխանափոխություն տեղի ունենա: Այս հարցը եւս մեզ համար առանցքային նշանակություն ունի:

- Ադրբեջանցիները մի եղկելի ֆիլմ են նկարել Ռուբեն Վարդանյանի մասին, որտեղ վերջինիս դեմ խոսում են նաեւ Տիգրան Խզմալյանն ու Սամվել Բաբայանը: Ի՞նչ եք կարծում՝ ինչպե՞ս են այդ հարցազրույցները հայտնվել ադրբեջանական մեդիայում:

- Անկախ ամեն ինչից, թե այդ տեսագրություններն ինչպես են հայտնվել ադրբեջանական մամուլում, չէր կարելի նման անընդունելի ստոր հերյուրանքներ տարածել Ռուբեն Վարդանյանի մասին….

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՄԵՆ ՀԱՐՑԻՆ ՄԻ ԿԵՍ ԺԱՄ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԷՐ, ՈՐ ԺԱՄԱՆԱԿ ՇԱՏԻ՝ ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ՔԻՉ ՀԱՐՑԵՐ ՀՆՉԵՆ

Դեկտեմբերի 22-ին Սանկտ Պետերբուրգում Նիկոլ Փաշինյանի եւ հայ համայնքի ներկայացուցիչների միջեւ հանդիպման ժամանակ սկանդալային միջադեպ է արձանագրվել: Հանդիպման մասնակիցներից հինգը միջոցառման կեսից լքել են դահլիճը: Հայաստանի վարչապետը նրանց հորդորել է վերադառնալ, զբաղեցնել իրենց տեղերը, խոստացել է պատասխանել բոլոր հարցերին, բայց երիտասարդները չեն համաձայնել՝

ասելով, որ իրենց պետք չեն Փաշինյանի պատասխանները, քանի որ նրա խոսքն ու գործը նույնը չեն:

ՀՀ վարչապետի աշխատակազմը միջադեպի մասին ոչինչ չի հաղորդում: Ովքե՞ր են մասնակցել Փաշինյանի հետ հանդիպմանը, ինչպե՞ս են ընտրել մասնակիցներին: Վարչապետի խոսնակը սահմանափակվեց հետեւյալով. «Սանկտ Պետերբուրգում ՀՀ վարչապետի հետ հանդիպմանը մասնակցել են տեղի հայ համայնքի ներկայացուցիչներ՝ համայնքային կառույցների ղեկավարներ, հասարակական եւ մշակութային կազմակերպությունների անդամներ, գործարարներ, ինչպես նաեւ՝ ակտիվ համայնքային գործիչներ: Մասնակիցների ընտրությունը կատարվել է համայնքային կառույցների եւ կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Մասնավորապես՝ «Սանկտ Պետերբուրգի շրջանային հայ մշակութային ազգային ինքնավարություն», «ԱՌՄԱ», «Սանկտ Պետերբուրգի շրջանային երիտասարդական ասոցիացիա», Ռուսաստանի հայ իրավաբանների ասոցիացիա, «Մեր գործը» կազմակերպություն եւ այլն»:

Այս կազմակերպությունները, մասնավորապես, Հայ իրավաբանների ասոցիացիան, որի ղեկավարը Շահեն Պետրոսյանն է եւ հաճախ հակադրվում է Արա Աբրահամյանի ղեկավարած «ՍԱՐ»-ին, Փաշինյանի բարեկամ-կառույցներն են Ռուսաստանում: Ավանդական կառույցները հանդիպումներին չեն հրավիրվում:

Առհասարակ, Սանկտ Պետերբուրգի հանդիպումը ծածուկ է կազմակերպվել, հատուկ ցուցակով: Բազմաթիվ անձինք հավաքված են եղել հանդիպման վայրում՝ «Ֆոր սիզնս» հյուրանոցի փոքր դահլիճի մոտ, ցանկանալով ներս մտնել, սակայն նրանց մուտքն արգելել են: Մարդիկ չեն կարողացել հանդիպել վարչապետի հետ, հայտնել իրենց մտահոգությունները: Հյուրանոցի շենքի մոտ նրանք կանգնել են բանտարկված սրբազանների, Սամվել Կարապետյանի նկարները պարզած:

Գործարար **Հովհաննես Ղադյանը**, որը նաեւ Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցու հոգաբարձուների խորհրդի անդամ է, մեզնից իմացավ, որ Փաշինյանը համայնքի հետ հանդիպման է գնացել: Հայկական եկեղեցու ծխականների հրավերը՝ իրենց հետ հանդիպելու, Փաշինյանը մերժել է: Ղադյանը պատմում է, որ Երեւան այցելություններից մեկի ժամանակ ինքը Փաշինյանի աշխատասենյակում է եղել, խոսել են Մեղրիի տնտեսական խնդիրներից, որ ոչխարի բուրդը փչանում է, չկա իրացման շուկա: «Մի 4 տարի առաջ էր: Ես բուրդը տարա Ռուսաստան՝ վերամշակման: Որոշ շրջան աշխատել եմ, բայց մի պահ եկավ, որ շատ վատ որակի բուրդ էր մատակարարն ուղարկում՝ կեղտոտ, վատ մշակված, եւ մենք դադարեցինք ընդունել այն, քանի որ շատ թանկ էր ստացվում»: Հովհաննես Ղադյանին հարցրինք, թե ինչպես են Սանկտ Պետերբուրգի հայերն առհասարակ վերաբերվում Փաշինյանին: «Մարդիկ տարբեր տրամադրվածություն ունեն: Ես լավն էլ եմ տեսնում, վատն էլ: Մեծ սխալ է նրա վերաբերմունքը եկեղեցուն: Սա բացասական ազդեց նրա իմիջի վրա: Ես տեսել եմ նաեւ, թե ինչպես է զարգանում հանրապետությունը, տեսել եմ՝ ինչպես են ճանապարհներ կառուցում եւ այլն, բայց մյուս կողմից կարծում եմ՝ արտաքին քաղաքական հարցերում նա շատ լուրջ թերություններ ունի: Սկզբում թեքվում էր Եվրոպայի, Ամերիկայի կողմը, իսկ հիմա արդեն հասկացել է, որ երկու կողմն էլ պետք է նայել՝ եւ Ռուսաստանի, եւ Արեւմուտքի»:

Պետք է հաշվի առնել, որ Պիտերի հայ համայնքը հիմնականում համախմբված է Սուրբ Կատարինե հայկական եկեղեցու շուրջ: **Եփրեմ քահանա Զարգարյանը** «Հրապարակի» հետ զրույցում պատմեց, որ Փաշինյանի հետ հանդիպմանը հրավիրված են եղել հիմնականում երիտասարդներ, ուսանողներ, որոնք Հայաստանից մեկնել են ուսանելու: «Բայց այստեղ կան կայացած, հայրենասեր, հաջողություններ ունեցած մարդիկ՝ մշակութային գործիչներ, գիտնականներ, որոնք այդ հանդիպմանը ներկա չեն եղել: Եղել են հյուպատոսարանի աշխատակիցներ, երիտասարդներ, բայց անգամ նրանց թվում են եղել մարդիկ, որոնք բարկացել են ու լքել են դահլիճը»,- ասում է նա:

Եփրեմ քահանային պատմել են, որ Փաշինյանը հանդիպման ժամանակ անակնկալի է եկել սուր հարցադրումներից, ասել է, որ մարդիկ իրեն ստիպեցին մտածել: «Հարցադրումները կապված են եղել եկեղեցու հետ, Էրդողանի գիրքը կարդալու հետ, անհարմար վիճակներ են ստեղծվել վարչապետի համար: Որեւէ մեկին թույլ չեն տվել, որ հեռախոսով ներս գնան, նկարահանումներ չեն թույլատրել: Ու, միեւնույն ժամանակ, երեկոյան մենք ժամերգություն ենք արել մեր Սուրբ Կատարինա եկեղեցում եւ հավատացյալներով, հայորդիներով հայտարարություն ենք հղել վարչապետին, որ ներկայացնեն մեր մտահոգությունները նրա վարած քաղաքականության առթիվ: Երեւի միայն Սովետի տարիներին է եղել, որ սրբազանները բանտարկվեն»:

Եփրեմ քահանա Զարգարյանը նկատում է, որ կիրակի օրը փոխանակ Փաշինյանը ներկայանար հայկական եկեղեցի՝ ժամերգության, գնացել էր Էրմիտաժ, ինչը հավատացյալին վայել չէ: Պետերբուրգի հայ համայնքում վրդովմունք են առաջացրել նաեւ ՀՀ իշխանության քայլերը Եզրաս արքեպիսկոպոսի դեմ, որի ջանքերով հայ համայնքը համախմբվել է, որը եկեղեցիներ է վերականգնել, եկեղեցապատկան շենքեր է վերադարձրել, դպրոց է բացել: «Այստեղ հայության ոգին եւ ազգասիրությունը պահպանվել են հենց իր՝ Եզրաս սրբազանի՝ այն ժամանակ դեռ աբեղա կամ վարդապետ եղած տարիների գործունեությամբ: Նրան ճանաչողներից որեւէ մեկի գլխով չի անցնում, որ այդ ամենը քաղաքականություն է»:

Ինչպե՞ս է անցել հանդիպումը, ընդհանուր առմամբ, ռուսաստանցիներն ինչպե՞ս են վերաբերվել վարչապետի ներկայացրած TRIPP նախագծին: «Մարդիկ հարցեր են տվել, եւ ամեն մի հարցին նա մի կես ժամ պատասխանում էր, այսինքն՝ ժամանակ էր լրացնում, որ հնարավորինս քիչ հարցադրումներ լինեն: Եվ, այո՝ մարդիկ են եղել, որոնք բարձրաձայնել են, որ ունեն պրոռուսական կողմնորոշում, որ արտաքին քաղաքական գիծը փոխելը նույնպես սխալ է: Եվ մենք իրոք մտահոգ ենք, որովհետեւ աշխարհում առաջին սփյուռքն ենք, հայերի մեծամասնությունն ապրում է Ռուսաստանում, Հայաստանի տնտեսությունը սնվում է Ռուսաստանից, եւ այս քայլերը միայն բերում են նրան, որ մեր ազգը պառակտվում ու մասնատվում է»:

Փաշինյանը գիտի, որ Ռուսաստանի հայ համայնքը ռուսամետ է, ո՞րն էր Պետերբուրգի հայ համայնքի հետ հանդիպելու բուն նպատակը: Ըստ Տեր Եփրեմի, Փաշինյանը 7-8 տարվա ընթացքում իր եւ իրեն ենթակա շատ կառույցների միջոցով Հայաստանի ներսում արդեն իսկ մեծ փոփոխություններ է արել՝ մարդկանց կողմնորոշումները փոխելու, ուղեղները լվանալու ուղղությամբ: «Նա իրեն այնքան հզոր է կարծում, որ մտածում է, թե Ռուսաստանում էլ կարող է նման քայլեր անել, բայց կարծում եմ՝ նա տեսավ, թե մարդիկ իրեն ինչպես են վերաբերվում»:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՄԱՐԶՊԵՏԻ ՀՈՐ ՍՐՃԱՐԱՆԸ 1 ԱՄՍՈՎ ՓԱԿՎԵԼ Է, ԱՊԱ՝ ՎԵՐԱԲԱՑՎԵԼ

Սեպտեմբերին Արմավիրի Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի (ՀՎԿԱԿ) մասնաճյուղից ահազանգ էր ստացվել, որ Արմավիրի բժշկական կենտրոն է ընդունվել երկու քաղաքացի՝ «սննդային թունավորում» ախտորոշմամբ: Պարզվել էր, որ այդ քաղաքացիների ինքնազգացողությունը վատացել էր «Արմավիր Գարդեն» հանրային սննդի կետում սնկապուր ուտելուց հետո: Ավելի ուշ բժշկական օգնության էր դիմել եւս 10 քաղաքացի, որոնք նույն՝ «Արմավիր Գարդեն»-ում հավի թեւիկներ, հավով աղցան եւ հավով պիցցա էին կերել: Այս սրճարան-ռեստորանը դեպքից հետո ՍԱՏՄ-ն չէր փակել, թեպետ մեկ տասնյակից ավելի քաղաքացիներ տեղափոխվել էին հիվանդանոց: Բանն այն է, որ այս օբյեկտի սեփականատերն Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանի հայրն է՝ նրա անվան հետ է կապվում այն: Նա Արմավիրում նաեւ սուպերմարկետներ ունի: ՍԱՏՄ-ից մեզ այդ ժամանակ ասել էին, թե չեն փակել օբյեկտը, մինչեւ ուտեստներից վերցված լաբորատոր փորձաքննության արդյունքները ստացվեն:

Երեկ ՍԱՏՄ-ից մեզ տեղեկացրին. «Սրճարանի գործունեությունը կասեցվել է, տրվել են պարտադիր կատարման հանձնարարականներ, որոնք կատարվել են, տնտեսվարողը ենթարկվել է վարչական պատասխանատվության, նորից թողարկել է սննդամթերքը, որ անհամապատասխանություններ ուներ, որը ենթարկվել է լաբորատոր փորձաքննության, եղել է առանց խախտումների: Կասեցումը վերացվել է»: Որքա՞ն է կազմել տուգանքի չափը, ասացին՝ այն հրապարակման ենթակա չէ: Սրճարանը մեկ ամիս է փակված եղել, գործունեությունը կասեցվել է սեպտեմբերի 9-ին, վերացվել՝ հոկտեմբերի 13-ին:

Քննչական կոմիտե հարցում էինք արել՝ կա՞մ նախաձեռնված վարույթ: Մեր գրավոր հարցմանն ի պատասխան հայտնել են. «ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում հանրային սննդի կետում թունավորման դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 413-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի (անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի անձանց հիվանդացում կամ թունավորում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով) հատկանիշներով: Նախաքննության ընթացքում նշված անձինք ճանաչվել են տուժող, իսկ ստացված դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների համաձայն՝ տուժողների առողջությանը պատճառվել է թեթեւ վնաս, առողջության կարճատեւ քայքայումով: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է, կատարվում են ապացուցողական եւ վարույթային անհրաժեշտ գործողություններ, արդյունքների վերաբերյալ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Նախաքննությունը շարունակվում է»:

Դեկտեմբերի 13-ին էլ, հիշեցնենք, պայթել էր մարզպետի հոր բենզինի բաքը՝ բաքը զոդող անձին ծանր վիճակում տեղափոխել էին հիվանդանոց, իսկ երեկ երեք երեխայի 36-ամյա հայրը մահացել է:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՔԱՆԴԵԼ ԵԿԵՂԵՑԻՆ, ԻՍԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԴԱՐՁՆԵԼ ՁԵՌՆԱՍՈՒՆ

Փաշինյանական իշխանության երկու քարոզիչներ՝ «Հանրապետություն» կոչվող կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը եւ Հանրային կոչվող հեռուստաընկերության լրագրող Պետրոս Ղազարյանը, ամփոփում են տարին եւ բացահայտում Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ իրականացվող իշխանության քաղաքականության իրական նպատակը՝ քանդել եկեղեցին: Նախ՝ Պետրոս Ղազարյանն իր բացման խոսքում ասում է, որ տարվա «ամենամեծ քաղաքական դիմակայությունը եկեղեցի-պետություն դիմակայությունն էր»: Պետություն ասելով, Ղազարյանը նկատի ունի փաշինյանական իշխանությանը, սրանց համար իշխանությունը պետություն է, դե, իրենք ծառայելով իշխանությանը՝ իբրեւ թե ծառայում են պետությանը: Բայց կարեւորն այն է, որ իշխանության հիմնական քարոզիչներից մեկն ընդունում է, որ հակամարտությունը ոչ թե Նիկոլ Փաշինյանի եւ Ամենայն հայոց հայրապետի միջեւ է, այլ՝ իշխանության եւ եկեղեցու: Որից հետո իշխանության մյուս քարոզիչը հայտարարում է. «Հայ առաքելական սուրբ եկեղեցին Ռուսաստանի հետ մեր կապի շղթայի վերջին օղակն է, եւ էդ օղակը քանդել է պետք, միանշանակ»: Այսպիսով փաշինյանական իշխանության նպատակը ձեւակերպված է հստակ՝ քանդել եկեղեցին: Եկեղեցի ասելով իրենք սահմանափակվելու են միայն այն որպես կազմակերպված հանրային ինստիտուտ վերացնելով, թե Սարգսյանն է էքսկավատորի դեկին, իսկ Ղազարյանը՝ բուլդոզերի, քանդելու են նաեւ եկեղեցիները՝ որպես շինություն, դեռեւս չի հստակեցվում:

Իշխանության քարոզիչները չեն թաքցնում, որ ուզում են՝ եկեղեցին լինի այնպիսի կառույց, ինչպիսին, օրինակ, ոստիկանությունն է, Ազգային անվտանգության ծառայությունը, պաշտպանության նախարարությունը կամ կառավարության որեւէ ստորաբաժանում, որտեղ իշխանությունը կարողանում է իր ուզած կադրային քաղաքականությունն իրականացնել՝ ում ուզում, ազատում են աշխատանքից, ում ուզում, նշանակում են: Լսեք, թե ինչ է ասում Նիկոլ Փաշինյանի իշխանության կցորդ «Հանրապետություն» կուսակցության նախագահն այս առումով. «Մեր ժողովրդի համար գաղտնիք էլ չի, որ հայ եկեղեցականների մեծ մասը հիմնականում ռուսական հատուկ ծառայությունների ազդեցության տակ է, այսինքն, որ Եզրասը (նկատի ունի Ռուսաստանի եւ Նոր նախիջեւանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանին՝ Ա. Բ.) այդ հատուկ ծառայությունների ազդեցության տակ է, թուղթը տպագրվեր, չտպագրվեր, էդ մասին ժողովուրդը խոսում էր, մարդիկ կային, որ հավատում էին, մարդիկ կային, ովքեր չէին հավատում, թուղթը տեսան՝ կհավատան, թե էլի կշարունակեն էդ թղթի մեջ բաներ ման գալ: Ինչո՞ւ է այդպես, որովհետեւ Ռուսաստանը հավատքի էդ մարմինը փորձում է օգտագործել քաղաքական նպատակներով, որովհետեւ մնացած բոլոր օղակներում, ենթադրենք՝ Ազգային անվտանգության ծառայություն, ոստիկանություն, կառավարություն, պաշտպանության նախարարություն, հիշեք՝ ինչքան փոփոխություններ եղան, եւ էդ փոփոխությունների հիմնական պատճառը նա էր, որ էդ կառույցների ղեկավարներն էս կամ էն կերպով Ղրիմի կողմնակից էին, Ռուսաստանի կողմից եկած հրամաններն էին կատարում եւ ոչ թե Հայաստանի Հանրապետության վարչապետի: ՊՆ-ում կան ռուսական կրթություն ստացած սպաներ, բայց մի 20-30 տոկոս, ոչ ավելին, նույնը՝ Ազգային անվտանգությունում, մյուս ոլորտներում, կառավարությունում եւ այլն: Եկեղեցին միակ օղակն է, որտեղ իր ամբողջության մեջ ու առաջին դեմքով գործում է ամբողջությամբ ռուսական համատեքստում, եւ եթե նայեք եկեղեցու կողմից ասվող ասույթները, դրանք մեկին մեկ կրկնում են, ինչքան էլ ամոթ է, Մարիա Զախարովայի տեսակետները, որովհետեւ հատուկ ծառայություններով կախվածություն ունի»:

Թե ինչով է Եկեղեցին կրկնել Մարիա Զախարովային, Արամ Սարգսյանը որեւէ կոնկրետ օրինակ չի բերում, հարցազրույց վարողն էլ չի հարցնում, թե կարո՞ղ եք նման թեկուզ մի օրինակ ներկայացնել: Կամ՝ եթե Եկեղեցու ներկայացուցիչները ռուսական հատուկ ծառայությունների ազդեցության տակ են, ինչո՞ւ են նրանք կալանավորված ոչ թե հենց այդ հոդվածներով, այլ հանրահավաքին մասնակցելուն պարտադրելու մեղադրանքով կամ իբրեւ թե ինչ-որ մեկի պայուսակի մեջ թմրանյութ գցելու, կամ՝ հրապարակային իշխանափոխություն անելու կոչերի համար: Եկեղեցու սպասավորների մեջ Ռուսաստանում կրթություն ստացածներ էլ չկան, խոսքը հոգեւոր կրթության մասին է, հայ հոգեւորականները կրթվում են Հայաստանում գործող հոգեւոր կրթական հաստատություններում: Հայ առաքելական եկեղեցին էլ Ռուս ուղղափառ եկեղեցուց որեւէ կախվածություն չունի, դրա մաս չի կազմում, թեեւ համագործակցում է, ինչպես մյուս բոլոր քրիստոնեական եկեղեցիների հետ: Բայց՝ չէ, իրենք ուզում են, որ Եկեղեցին լինի ՊՆ-ի, ԱԱԾ-ի կամ ոստիկանության նման, իրենք այնտեղ իրենց դրածոներին նշանակեն, որ Վեհափառը ոչ թե հանրային շահերն արտահայտի եւ պետք եղած ժամանակ, առաջնորդվելով այդ նույն հանրային եւ պետական շահերով, վարչապետի պաշտոնը զբաղեցողին հորդորի կամովին այն լքել, այլ, ինչպես Արամ Սարգսյանն է ասում, վարչապետի հրամանը կատարի:

Տարին ամփոփելու ընթացքում փաշինյանական երկու քարոզիչ փորձեցին ծաղրել նաեւ ընդդիմությանը: «Էս ամեն ինչն ուղեկցվում է ամենօրյա թուրքական վախով՝ էկան թուրքերը, ադրբեջանցիները, հլա որ նավթամթերքով ու հացահատիկով են գալիս, մեզ ուտելու են: Կամ պիտի փրկվենք՝ ռուսները փրկեն, կամ թուրքերը գալիս են: Եվ միայն բազան է, որ մեզ փրկում է»,- փորձելով հեգնել ու ծաղրել ընդդիմությանը՝ ասում է Պետրոս Ղազարյանը, կարծես ընդամենը երկու տարի առաջ չէր, որ այդ նույն՝ ադրբեջանցի թուրքերը բռնի հայաթափեցին Արցախը կամ երեք տարի առաջ տարածքներ գրավեցին Հայաստանի Հանրապետությունից, եւ դրա հետեւանքով սպանվեցին ու զոհվեցին հազարավոր հայ մարդիկ, ՀՀ քաղաքացիներ: Հնարավոր է, որ մենք գործ ունենք ոչ թե հիշողության կորստի կամ դեմենցիայի հետ, այլ՝ պարզ անտեղյակության. քանի որ Պետրոս Ղազարյանը դիտում է միայն Հանրային հեռուստաընկերություն, կարող է եւ տեղյակ չլինել հիշյալ իրադարձություններից:

Արամ Սարգսյանը, ի տարբերություն Պետրոս Ղազարյանի, ավելի տեղեկացված է. «Էդ բազան որ կար (քմծիծաղում է Սարգսյանը), հիմի իրենք, ինչ է՝ ժխտո՞ւմ են, որ Վարդենիսի տարածքում Ադրբեջանը հայկական տարածքներում է, որ Ջերմուկի հայկական տարածքներ է մտել, որ Սեւ լճի տարածքում իրենք հայկական տարածքներ են մտել, բա էդ բազան ինչի՞ չփրկեց: Վաղուց տարածաշրջանում խաղի կանոնները թելադրողը Միացյալ Նահանգներն է, էդ մոտեցումը, որ տարածաշրջանում կամ Թուրքիան է, կամ Ռուսաստանը, անցյալում է»: Սարգսյանը երեւի չի էլ հասկանում, որ ինքն իրեն հակասում է: Եթե տարածաշրջանում վաղուց որոշողն ԱՄՆ-ն է, ստացվում է, որ ԱՄՆ-ն է որոշել եւ առնվազն թույլ տվել, որ ադրբեջանական զորքը մտնի Վարդենիսի, Ջերմուկի կամ Սեւ լճի հայկական տարածքներ եւ շարունակի այնտեղ մնալ մինչեւ այսօր: Եթե ռուսական ռազմաբազան ոչինչ չի որոշում, ոչ մի ֆունկցիա չի կատարում, ինչո՞ւ Հայաստանի իշխանությունը չի պահանջում, որ Ռուսաստանը հանի իր ռազմաբազան ՀՀ տարածքից, մանավանդ որ Ռուսաստանի նախագահն ասել էր, որ պատրաստ են դրան: Իշխանության քարոզիչն այս հարցերը չի տալիս իր գործընկեր քարոզիչին, որովհետեւ ինքն էլ դրա պատասխանը չունի եւ գիտի, որ դիմացինն էլ դրա պատասխանը չունի ու իշխանության մյուս ներկայացուցիչներն էլ: Իսկ իրենք չեն կարող իրենց անպատասխան հարցեր տալ, հիմար վիճակի մեջ գցել:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԴԱՐՁ Ի ՇՐՋԱՆՍ ՅՈՒՐ

Լրջանում են խոսակցություններն այն մասին, որ Նիկոլ Փաշինյանը ծրագրել է դեկտեմբերի 28-ին՝ այս տարվա վերջին պատարագի օրը, ժամանել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ ի վերջո Վեհարանից հանել Վեհափառին: Այս հերյուրանքներին ես չեմ հավատում, չնայած որ Նիկոլից ամեն ինչ սպասելի է: Եվ հիմա աշխատում եմ միշտ լավը մտածել, որ ամեն ինչ լավ լինի, որ չդադարենք ազգ ու ժողովուրդ լինել ու չդառնանք կիսախելագար մոլեռանդ ամբոխ:

Ըստ համացանցային աղբյուրների, որոնց հավաստիությունը CIVIC-ից ավելին չէ, Հայ առաքելական եկեղեցու խնդրին անգամ թուրքական լրատվամիջոցներն են անդրադարձել եւ գրել, որ Էրդողանին ու Նիկոլին կհաջողվի փոխել կաթողիկոսին եւ մշտնջենական բարեկամություն հաստատել Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ: Թուրքական թերթերը, իբր, գրել են նաեւ, որ նոր կաթողիկոսին Պոլսից են բերելու, որովհետեւ Էրդողանն է այդպես ուզում: Չգիտեմ, ես թուրքական մամուլ չեմ կարդացել, չեմ կարդում եւ, հավանաբար, չեմ էլ կարդա, եթե դեկտեմբերի 28-ին չհաստատվեն մեզանում տարածվող հիմար խոսակցությունները, թե Նիկոլը «հեսա» գնալու է Էջմիածին, ու տեսեք՝ ինչ է անելու: Մի շաբաթ առաջ տեսանք Նիկոլի «ինչ անելը»: Մի երկու այլասերված եպիսկոպոս էր գցել առաջ, մի կարգալույծ արված քահանա, մի չստացված դերասան… Եվ ուզում էր այդքանով կաթողիկոսին հրաժարական պարտադրել: Ոստիկանության մասին բան չեմ ասի, որովհետեւ այդ օրն այն հազվագյուտ օրերից էր, որ նրանք ոչ թե Նիկոլի, այլ ավելի ցածր ռանգի հետույքներ էին պաշտպանում ժողովրդից:

Շատ կարեւոր եմ համարում, որ այս իրավիճակում Նիկոլն անձամբ որոշում կայացնի եւ մի այնպիսի ղալաթ չանի, որ հետո բոլորով ընկնենք ք.քը: Առանց այն էլ խորը ք.քի մեջ ենք, ու այլեւս տեղ չկա խրվելու: Հուսով եմ, որ Էրմիտաժի էքսկուրսիան իր դրական ազդեցությունը թողած կլինի նրա հայկական գեների վրա, եւ դեկտեմբերի 28-ին մենք Նիկոլին կտեսնենք ոչ թե թափառաշրջիկ հավատացյալների խմբով Էջմիածնի ճանապարհին դեգերելիս, այլ նորմալ հայ մարդկանց հետ պատարագի մասնակցելիս:



Լիահույս եմ:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵՑ ԱՇԽԱՐՀԸ 2025-ԻՆ

Ավարտվող 2025 թվականը գերհագեցած էր աշխարհաքաղաքական իրադարձություններով՝ ռազմական հակամարտություններից մինչեւ մարդածին աղետներ:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ 2025-ի միջազգային օրակարգում գերիշխում էր ԱՄՆ 47-րդ նախագահ Դոնալդ Թրամփը, որը երկրորդ ժամկետով վերադարձավ Սպիտակ տուն: Նա բազմաթիվ շքեղ խոստումներ տվեց, իսկ հետո հայտարարեց, որ 12 ամսվա ընթացքում կարողացել է 8 կոնֆլիկտ կանգնեցնել, այդ թվում՝ հայ-ադրբեջանականը, խոստանալով ամեն ինչ անել, որ ռուս-ուկրաինական պատերազմն էլ ավարտվի այս տարի: Նա «առեւտրային պատերազմ» հայտարարեց մի շարք երկրների, հայտարարեց Գրենլանդիան, Կանադան եւ Պանամայի ջրանցքը Միացյալ Նահանգներին միացնելու մասին: Բայց այդ հայտարարված ծրագրերը մնացին լոկ խոսքեր, այնպես, ինչպես նաեւ Ուկրաինայում հակամարտությունը 24 ժամվա ընթացքում դադարեցնելու խոստումները: Կառավարության արդյունավետության դեպարտամենտը, որը ստեղծել է Թրամփը, դանդաղ, բայց հաստատուն ծաղկում ապրեց, հատկապես այն բանից հետո, երբ նախագահը կոնֆլիկտ ունեցավ դրա ղեկավարի՝ միլիարդատեր Իլոն Մասկի հետ: Թվում է՝ քչերը տեսան պետական ծախսերի կրճատման սպասվող օգուտները: Ապրիլի սկզբին հայտարարված «Ամերիկայի ազատագրման օրը» հանգեցրեց համաշխարհային սակագնային պատերազմի, բայց նույնիսկ այս արշավը կիսատ մնաց՝ ամերիկացիներին չբերելով խոստացված հսկայական օգուտները: Մինչդեռ ԱՄՆ քաղաքացիները դժգոհ են վատթարացող սոցիալ-տնտեսական իրավիճակից եւ Թրամփի քաղաքականությունից: Բայց կա մեկ ոլորտ, որտեղ Թրամփը հետեւողականություն է ցուցաբերել՝ անօրինական ներգաղթի դեմ պայքարում: Անվտանգության ուժերն արտաքսում են միգրանտներին, եւ զորքեր են տեղակայվում քաղաքներում՝ հանցագործության դեմ պայքարելու համար:

ՏԱՐՎԱ ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ

Գաղտնիք չէ, որ Դոնալդ Թրամփը երազում է Խաղաղության նոբելյան մրցանակի մասին: Նրան այդ պարգեւին առաջադրելու մասին Վաշինգտոնում հայտարարեցին Փաշինյանն ու Ալիեւը՝ օգոստոսյան հանդիպման ժամանակ, երբ ստորագրվում էին հայտնի համաձայնագրերը: Խաղաղարարի դեր ստանձնած Թրամփն այժմ խոստովանում է, որ չափազանց լավատես էր ուկրաինական հակամարտությունը լուծելու իր կարողության հարցում: Եվ չնայած դեռ շարունակում է բանակցություններ վարել, երբեմն հայտարարում է, որ պատրաստ է «ձեռքերը լվանալ» այս հարցից: Իսկ ամենաարդյունավետը Թրամփի խաղաղարար ջանքերն են Գազայում, որտեղ արյունահեղությունը մեկնարկել էր 2023 թ.: Ներկայում Իսրայելի եւ ՀԱՄԱՍ-ի միջեւ պաղեստինյան հատվածում ակտիվ մարտեր չկան, չնայած համաձայնագրի ստորագրումից ի վեր մի քանի հարյուր մարդ է զոհվել: Թրամփը պնդում է, որ ավարտել է Իսրայելի եւ Իրանի միջեւ պատերազմը: Հիշենք՝ հունիսի 13-ին Իսրայելը հրթիռակոծեց Իրանը՝ «ժողովուրդը՝ ինչպես առյուծ» ռազմական գործողության շրջանակներում: 10 օր անց Միացյալ Նահանգները՝ «խաղաղարար» Թրամփի գլխավորությամբ, միացան ագրեսիային. հունիսի 22-ին ամերիկյան ռմբակոծիչները հարվածեցին Իրանի միջուկային օբյեկտներին: Հաջորդ օրը Իրանը պատասխանեց՝ ռմբակոծելով Մերձավոր Արեւելքում գտնվող ամերիկյան ռազմական բազաները: Սա չխանգարեց Թրամփին՝ հունիսի 24-ին Իրանի եւ Իսրայելի միջեւ հրադադար հայտարարելու:

ՏԱՐՎԱ ՆՎԱՍՏԱՑՈՒՄԸ

Այն, որ Թրամփը չէր պատրաստվում հետեւել իր նախորդին՝ Բայդենին, եւ նրա եվրոպական արբանյակներին՝ անվերապահորեն աջակցելով Ուկրաինային, պարզ էր դեռեւս նրա ընտրարշավի ժամանակ: Եվ երբ Զելենսկին մեկնեց Վաշինգտոն՝ հանդիպելու Սպիտակ տուն վերադարձած Թրամփի հետ, նա, հավանաբար, վատ նախազգացում ուներ, որ այս անգամ իրեն չեն դիմավորի ռոք-աստղին վայել ընդունելությամբ: Իրականում՝ ամեն ինչ շատ ավելի վատ ստացվեց: Թրամփը եւ փոխնախագահ Վենսը հրապարակավ քննադատեցին Զելենսկուն՝ խաղաղության շուրջ բանակցություններ վարելու անպատրաստության համար: Ուկրաինայի նախագահը ստիպված եղավ վաղաժամ լքել Սպիտակ տունը՝ հիասթափված: Բրիտանական մի պարբերական դա որակեց որպես «վերջին պատմության ամենամեծ դիվանագիտական աղետներից մեկը»:

ՏԱՐՎԱ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Ուկրաինական ճգնաժամի լուծման ուղղությամբ ամենակարեւոր քայլը օգոստոսի 15-ին Ալյասկայում կայացած ռուս-ամերիկյան գագաթնաժողովն էր: ՌԴ եւ ԱՄՆ նախագահները հանդիպեցին առաջին անգամ՝ 2021-ից ի վեր (երբ Պուտինը հանդիպեց Ջո Բայդենի հետ Ժնեւյցարիայում): Չնայած խաղաղության համաձայնագրի հարցում առաջընթաց չեղավ, հանդիպման փաստն ինքնին շատ բան է ասում: Սա ներառում է ամերիկացի նախագահի պրագմատիզմն ու հայտնի հեռատեսությունը, որը հրաժարվեց ընդօրինակել եվրոպացի առաջնորդներին, որոնք ցուցադրաբար փակեցին բոլոր դռները Մոսկվայի առաջ՝ զինված հակամարտության մեկնարկից սկսած:

Սեպտեմբերի սկզբին Չինաստանում տեղի ունեցած 2 կարեւոր իրադարձություն նույնպես հավակնում է 2025 թ. անվանակարգում առաջին տեղին: Տյանցզինում կայացած ԾՀԿ գագաթնաժողովում տեղի ունեցավ ՌԴ նախագահ Պուտինի, Չինաստանի նախագահ Սի Ծինփինի եւ Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի հանդիպումը: Պեկինում Հաղթանակի օրվա շքերթը, որը նշում էր միլիտարիստական Ճապոնիայի պարտության 80-ամյակը, նույնպես գրավեց քաղաքական աշխարհի ուշադրությունը. Պուտինի, Սի Ծինփինի եւ Հյուսիսային Կորեայի առաջնորդ Կիմ Չեն Ընի ներկայությունը մեկ վայրում լուրջ ուղերձ էր շատերին:

ՏԱՐՎԱ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Ապրիլին Հնդկաստանի կողմից կառավարվող Քաշմիրում տեղի ունեցավ արյունալի հարձակում. ահաբեկիչները կրակ բացեցին զբոսաշրջիկների վրա՝ սպանելով 26 մարդու եւ վիրավորելով եւս 17-ի: Բացի ողբերգություն լինելուց, ահաբեկչական հարձակումն ուներ շատ ավելի ծանր հետեւանքներ. այն գրեթե հանգեցրեց 2 միջուկային տերությունների միջեւ պատերազմի: Հարձակմանն ի պատասխան՝ Հնդկաստանը մայիսի 6-ին «Սինդուր» գործողություն ձեռնարկեց՝ հրթիռային հարվածներ հասցնելով Պակիստանին: Պակիստանը մայիսի 10-ին հայտարարեց Հնդկաստանի դեմ «Պաշտպանական եզր» գործողության մեկնարկը եւ հրթիռակոծեց հարեւան երկիրը: Թվում էր, թե իրավիճակը կարող է ցանկացած պահի շրջվել՝ տարածաշրջանը ներքաշելով լայնածավալ պատերազմի մեջ՝ անգամ միջուկային զենքի ներգրավմամբ, սակայն մայիսի 10-ին ԱՄՆ նախագահը հայտարարեց Հնդկաստանի եւ Պակիստանի միջեւ լիակատար զինադադարի մասին՝ ԱՄՆ-ի միջնորդությամբ, երկարատեւ բանակցություններից հետո: Այնուամենայնիվ, պատերազմի ավարտի հիմնական վաստակը պատկանում է Նյու Դելիի եւ Իսլամաբադի առաջնորդներին, որոնք բավարար զսպվածություն եւ քաղաքական իմաստնություն դրսեւորեցին:

ՏԱՐՎԱ ԱՂԵՏՆԵՐԸ

Հունիսի 12-ին Հնդկաստանում՝ Ահմադաբադի մոտակայքում կործանվեց Boeing 787-ը: Ինքնաթիռը թռիչքի ժամանակ բախվեց հանրակացարանի շենքին: Օդանավում կար 242 մարդ: Կենդանի մնաց միայն մեկը՝ Մեծ Բրիտանիայի քաղաքացի Վիշվաշ Կումար Ռամեշը: Մարտի 28-ին Մյանմայում տեղի ունեցավ 7.7 մագնիտուդով երկրաշարժ, որի էպիկենտրոնը գտնվում էր Մանդալայի մոտ, որը երկրի երկրորդ ամենամեծ քաղաքն է: Այն զգալի վնասներ պատճառեց Մյանմայում եւ հարեւան Թաիլանդում: Այս երկրաշարժը Մյանմայում 1912 թվականից ի վեր ամենաուժեղն էր եւ ամենամահացուն՝ 2023 թ. Թուրքիայում եւ Սիրիայում տեղի ունեցած իրադարձություններից ի վեր: Երկրաշարժը խլեց առնվազն 5 հազար 300 մարդու կյանք Մյանմայում եւ 36-ի կյանք՝ Թաիլանդում, վիրավորվեց ավելի քան 7 հազար 100 մարդ: Հարյուրավոր մարդիկ առայսօր անհետ կորած են: Եվ նոյեմբերի 26-ին Հոնկոնգի բարձրահարկ բնակելի համալիրում բռնկվեց ավերիչ հրդեհ, որը խլեց առնվազն 160 մարդու կյանք: Սա Հոնկոնգում տեղի ունեցած ամենամահացու հրդեհն էր՝ 1948 թ. պահեստի հրդեհից հետո, որը խլել էր 176 մարդու կյանք:

ՏԱՐՎԱ ՍԿԱՆԴԱԼԸ

Հոկտեմբերին բրիտանական թագավորի կոռումպացված կրտսեր եղբայրը՝ արքայազն (այժմ՝ նախկին արքայազն) Էնդրյուն, որը մի քանի տարի շարունակ խրված էր ամերիկացի ֆինանսիստ Ջեֆրի Էպշտեյնի պեդոֆիլային ցանցի շուրջ սեռական սկանդալի մեջ, մեղադրվեց անչափահասների հետ սեռական հարաբերություն ունենալու մեջ: Նախկին արքայազնը փորձել է հերքել այս տեղեկությունները, բայց նույնիսկ թագավորական ընտանիքը չի հավատում նրան. հոկտեմբերի 17-ին, թագավորի հետ զրույցից հետո, Էնդրյուն հայտարարեց, որ այլեւս չի օգտագործելու մոր՝ Եղիսաբեթ II թագուհու կողմից իրեն տրված տիտղոսները: Հոկտեմբերի 30-ին թագավորը Էնդրյուին զրկեց արքայազնի տիտղոսից: Նա այժմ ստիպված է բավարարվել Մաունթբաթեն-Վինձոր ազգանունով: Քննադատները կարծում են, որ ԱՄՆ նախագահը կնախընտրեր գաղտնի պահել սեռական հանցագործի՝ Էփշտեյնի հետ իր նախկին կապերի որոշ մանրամասներ:

ՏԱՐՎԱ ՊԱՊԸ

Ապրիլի 21-ին, Սուրբ Զատկի օրը, 88 տարեկանում մահացավ Հռոմի պապ Ֆրանցիսկոսը, որը 2013-ից՝ Բենեդիկտոս XVI-ի հրաժարականից հետո կաթոլիկ եկեղեցու ղեկավարն էր: Մայիսի 8-ին ամերիկացի Ռոբերտ Ֆրանցիսկոս Պրեւոստը դարձավ նոր պապ: Նա առաջին պապն է Միացյալ Նահանգներից եւ երկրորդը՝ իր նախորդ Ֆրանցիսկոսից հետո, որը եկել է արեւմտյան կիսագնդից: Չնայած ամերիկյան ծագմանը, նոր պապը հաճախ քննադատում է ԱՄՆ նախագահի գործողությունները եւ առաջարկում է Վատիկանի միջնորդական ծառայությունները՝ ուկրաինական հակամարտության կարգավորման համար, միաժամանակ ողջունելով Զելենսկուն: Հռոմի կաթոլիկ եկեղեցու առաջնորդն իր առաջին արտասահմանյան շրջագայությունը կատարեց մուսուլմանական երկրներում (Թուրքիա եւ Լիբանան):

ՏԱՐՎԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

2025-ին մի շարք երկրներում տեղի ունեցավ իշխանափոխություն, որոշ վայրերում՝ ընտրական գործընթացի արդյունքում, մյուսներում՝ զինվորական հեղաշրջումների: Որոշ վայրերում զանգվածային բողոքի ցույցերը հանգեցրին անցանկալի քաղաքական գործիչների տապալմանը: Օրինակ, սեպտեմբերի 9-ին Նեպալում տեղի ունեցան հակակառավարական ցույցեր, ցուցարարները հրկիզեցին խորհրդարանի եւ Գերագույն դատարանի շենքերը, որի արդյունքում զոհվեց ավելի քան 20 մարդ, մի քանի հարյուրը վիրավորվեցին: Վարչապետ Խադգա Պրասադ Շարմա Օլին եւ կառավարության մի քանի անդամ հրաժարական տվեցին: Հոկտեմբերի 14-ին՝ երիտասարդների կողմից կառավարության դեմ բողոքի ցույցերի ֆոնին Մադագասկարում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում: Նախագահ Անդրի Ռաջոելինան փախավ երկրից: Իշխանությունը զավթեց գնդապետ Միքայել Ռանդրիանիրինան:

ՏԱՐՎԱ ԿՈՂՈՊՈՒՏԸ

Փարիզի հանրահայտ Լուվրի թանգարանը թալանեցին ոչ թե մութ գիշերով, այլ՝ ցերեկով: Հոկտեմբերի 19-ին անհայտ անձինք գողացան մի քանի եզակի իրեր Ֆրանսիայի թագավորական զարդերի հավաքածուից: Թանգարանի բացումից կես ժամ անց գողերը, օգտագործելով բեռնատար՝ ձգվող սանդուղքով եւ անկյունային հղկող սարքով, պատուհանից մտել են Ապոլլոն պատկերասրահ, որտեղ պահվում են թագավորական զարդերը, ինչպես նաեւ դեկորատիվ արվեստի այլ գործեր: Կոտրել են 2 ցուցափեղկ եւ գողացել 8 զարդ՝ ընդհանուր 88 միլիոն եվրո արժողությամբ: Ոստիկանությունը ձերբակալել է մի քանի կասկածյալի, սակայն գողացված զարդերը դեռ չեն հայտնաբերվել (բացառությամբ Նապոլեոն III-ի կնոջ՝ կայսրուհի Եվգենիայի վնասված թագի):

Արա ԱԼՈՅԱՆ

ԹԻՖԼԻՍ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՑ ՀԵՏՈ ԹԻՐԱԽՈՒՄ ԿՀԱՅՏՆՎԵՆ ԵԶԴԻՆԵՐԸ, ԱՍՈՐԻՆԵՐՆ ՈՒ ՌՈՒՍ ՄՈԼՈԿԱՆՆԵՐԸ

Չի բացառվում, որ հետագայում դարձյալ փաստաթղթեր հրապարակվեն որեւէ այլ եպիսկոպոսի, քահանայի մասով, եւ հայտարարվի, որ նրանք 1986 թ., 1970 թ. ԿԳԲ-ի գործակալ են: «Հրապարակի» հետ զրույցում իր տեսակետն է հայտնում վրաստանաբնակ հայ գործիչ, բժիշկ **Գուրգեն Մխիթարյանը**: «Սկզբում մեղադրում էին կաթողիկոսին, որ զավակ ունի: Դա բավական չեղավ, հետո մեղադրեցին ուրիշ հարցերում: Թբիլիսիի հայկական եկեղեցու բակում էի կանգնած, մարդիկ պատմում էին հայկական լրատվամիջոցներից մեկով ինչ-որ մեկի պատմածը, թե իբր 200 միլիոն դոլար է տվել Վեհափառը, որ գնդակահարեն Վազգեն Սարգսյանին խորհրդարանում. հոկտեմբերի 27-ի դեպքերը նկատի ունեն: Նման ստահոդ լուրեր են տարածում, ու ոչ ոք դրա համար չի պատժվում: Հրապարակված կամ հետագայում հրապարակվելիք փաստաթղթերը վստահություն չեն ներշնչում, մեր հայ ազգի ամբողջ դժբախտությունն այն է, որ ստախոսության ու խոսքի ազատության միջեւ դրվում է հավասարության նշան: Եվ հիմար ամբոխը միշտ էլ հավատում է սկանդալային թեմաներին, բայց ռեալ ոչ ոք չի ուզում լսածի շուրջ մտածել, վերլուծել»,- ասաց Մխիթարյանը:

Ըստ նրա՝ Վրաստանի հայ համայնքում էլ կան հայ աղանդավորներ, որոնք գալիս են եկեղեցու բակ ու, Վեհափառի հետ կապված, հայերի շրջանում այդպիսի ստահոդ լուրեր են տարածում, սակայն հիմնական դերակատարները Եհովայի վկաներն ու «Կյանքի խոսք» կազմակերպության ներկայացուցիչներն են: Անդրադառնալով Մայր Աթոռի վրա դեկտեմբերի 18-ի ասպատակությանն ու հետագա գործողություններին՝ նա նշում է, որ 2018 թվականի «հեղափոխությունը» դեռ չի ավարտվել, ու այս ասպատակությունն էլ դրա ապացույցն է: «Այսօր կատարվողն այդ «հեղափոխության» տրամաբանական շարունակությունն է: Ես ուղիղ հեռարձակմամբ հետեւում էի ու տեսա, որ տասը եպիսկոպոսների առաջնորդությամբ այնտեղ գնացած մարդիկ ծամոն էին ծամում, երկու ձեռքի միջնամատն էին ցույց տալիս, հարբած մարդիկ երեւացին: Գիտեք, շատ վատ է, որ նման կեղտոտ խավին իրավունք են տալիս ինչ-որ հարց որոշել, դա շատ վատ է: Իսկ հետագա զարգացումների մասով, Աստված տա, որ սխալվեմ: Մինչ այս արշավի սկիզբը շատ էր խոսվում Պապ թագավորի ժամանակաշրջանի մասին, դա հենց այնպես չեն խոսել՝ ինձ թվում է: Եվ եթե այս իշխանություններն իրենց համեմատել են Պապ թագավորի հետ, ապա Վեհարանում կկատարվի այն, ինչ որ կատարվեց Ներսես Մեծ կաթողիկոսի հետ: Մինիմում՝ կգնան կալանավորման, մաքսիմում՝ գուցեեւ վատ վախճան լինի, քանի որ նրանք հիշատակել են Պապ թագավորին: Իսկ Փավստոս Բուզանդից մենք գիտենք, թե Ներսես կաթողիկոսի վախճանն ինչպես է եղել: Աստված տա՝ ես սխալվեմ»,- շեշտում է վրացահայ գործիչը:

Ցանկացած պոպուլիստական հայտարարություն մեծ արձագանք է գտնում հասարակ ժողովրդի մոտ՝ կարծում է մեր հայրենակիցն ու հավելում, որ հարցեր առաջանում են միայն փոքրամասնության մոտ, որն այսօր պատանդի կարգավիճակում է մեծամասնության ձեռքին: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ Լենինի ժամանակ, նույնն էր կատարվում, հարձակում եկեղեցիների վրա եւ այլն: «Հայաստանում հիմա կարելի է լրիվ նեոբոլշեւիկյան ժամանակաշրջան համարել, որովհետեւ հենց եկեղեցու դեմ է այս շարժումը կատարվում: Ինձ մոտ հարց է առաջանում. մի՞թե մարդիկ չեն հասկանում՝ ում է սա ձեռնտու: Ես Վեհափառին անձամբ չեմ ճանաչում, ինձ համար հիմք չեն տարածվող լուրերը, ես ունեմ անձնական կարծիք, բայց մի ծաղկով էլ գարուն չի գալիս»,- ասաց Մխիթարյանը: Վրաստանի հայ համայնքի ակտիվ անդամները, ըստ զրուցակցիս, չունեն սեփական կայուն տեսակետ, մեկ կարող են իր տեսակետը կիսել, մեկ՝ ճիշտ հակառակ տեսակետ:

Անդրադառնալով Մայր Աթոռի վրա հարձակմանը՝ նա նշում է, որ Հայ առաքելական սուրբ եկեղեցին աշխարհի ամենամաքուր եկեղեցին է, հատկապես երբ համեմատական ես տանում այլ եկեղեցիների հետ՝ Հռոմի կաթոլիկ, հունադավան եւ այլն, ու ինքը չի կարողանում հասկանալ, թե ինչու են խայտառակում մեր եկեղեցուն, չէ՞ որ ամբողջ աշխարհն է հետեւում տեղի ունեցողին: «2018 թվականի այդ «հեղափոխությունն» իր տված վնասներով երեւի միայն հայերի դեմ ցեղասպանության տված վնասներին է զիջում, մյուս բոլոր աղետներն ու ողբերգությունները մեզ այդքան չեն վնասել, որքան դա: 11 միլիոն հայության երեխաներ այսօր մնում են անհայրենիք, անկրոն, անկնունք, մի հատ թափառական ցեղ ենք դառնում մենք»,- ասաց Մխիթարյանը: Սակայն եկեղեցու դեմ այս պատերազմը չի բավարարվելու միայն Մայր Աթոռի դեմ գրոհով կամ զավթմամբ, ինչպես դա ծրագրում են անել իշխանությունները, դա շարունակություն է ունենալու՝ համոզված է վրացահայ գործիչը: «Քանի որ հայոց եկեղեցին՝ Էջմիածինը, ճանաչված է նախաքաղկեդոնական ուղղափառ եկեղեցիների կողմից որպես գլխավոր, դա ասորի Հակոբիկ եկեղեցին է, ղպտիների ուղղափառ եկեղեցին է, եթե չեմ սխալվում՝ նաեւ հնդիկ Մալաբար եկեղեցին, եւ դրանք՝ բոլորը, մերձավորարեւելյան եկեղեցիներ են: Հասցնելով հարված Մայր Աթոռին, նրանք գլխատում են նախաքաղկեդոնական եկեղեցիներին եւս, եւ դա աշխարհաքաղաքական կենտրոնների շահերից է բխում: Եթե Մայր Աթոռը, Աստված մի արասցե, պարտվի, ապա հաջորդը կլինեն եզդիները, կթիրախավորվեն եզդիական համայնքի շեյխերը եւ Հայաստանում բնակվող ասորի Հակոբիկ եկեղեցու հետեւորդները, հետո արդեն հերթը կհասնի ռուս մոլոկաններին: Թվարկածս ազգային եւ կրոնական փոքրամասնությունները Հայաստանի ավանդական եւ ավանդապաշտ համայնքներն են: Աշխարհաքաղաքական կենտրոններին, գուցե Վատիկանին եւս, ձեռնտու է Հայաստանյայց առաքելական եկեղեցու քանդումը»,- եզրափակեց Գուրգեն Մխիթարյանը:

Հայկա ԱԼՈՅԱՆ

Դեկտեմբերի 24-ի երեկոյան մեկնարկում են սուրբ ծննդյան տոները

Երեկ՝ դեկտեմբերի 24-ի երեկոյից քրիստոնյա աշխարհում մեկնարկում են սուրբծննդյան տոնական արարողությունները: Դեկտեմբերի 25-ին քրիստոնյա Արեւմուտքը նշում է Հիսուս Քրիստոսի սուրբծննդյան տոնը: Դեկտեմբերի 24-ի երեկոյան՝ սուրբծննդյան տոնի նախօրեին, Վատիկանի Սուրբ Պետրոսի մայր տաճարում տեղի ժամանակով երեկոյան 10-ին կմեկնարկի Սուրբծննդյան ճրագալույցի Սուրբ պատարագը, որը կնախագահի Հռոմի Լեւոն 14-րդ պապը: Պատարագի ընթացքում կընթերցվեն Սբ Գրային մարգարեությունները Հիսուսի ծննդյան մասին, եւ կերգվի «Կալենդա»՝ հին ծիսական հանդիսավոր կաթոլիկ շարականը: Նաեւ կկարդացվեն Ավետարաններից Ղուկասի Ավետարանի 2-րդ գլխի 1-4-րդ համարները, որը պատմում է Հիսուսի ծննդյան մասին: Արարողության ընթացքում Լեւոն 14-րդ Սրբազան քահանայապետը մի քանի երեխայի հետ կուղղվի տաճարի մեջ կառուցված Սրբազան մսուրը՝ այնտեղ զետեղելու նորածին Հիսուս մանկան արձանը: Արդեն դեկտեմբերի 25-ին Սբ Պետրոսի մայր տաճարում Լեւոն 14-րդ Սրբազան քահանայապետի կողմից կմատուցվի Սբ պատարագ, իսկ կեսօրից հետո՝ Նորին սրբությունը սուրբծննդյան իր շնորհավորանքներն ու պատգամը կհղի «Քաղաքին ու աշխարհին» (urbi et orbi): Ի դեպ, սա Լեւոն 14-րդի՝ իբրեւ Հռոմի պապ, առաջին քահանայապետական սուրբծննդյան պատարագն է լինելու:

Հիշեցնենք, որ մինչեւ 4-րդ դարը բոլոր քրիստոնյաները հունվարի 6-ին են նշել Սուրբծննդյան ու Աստվածահայտնության տոնը, սակայն 4-րդ դարից Արեւմուտքը Սուրբ Ծնունդը նշում է դեկտեմբերի 25-ին, Աստվածահայտնությունը, որի ընթացքում կատարվում է բոլորին հայտնի Ջրօրհնեքի կարգը՝ հունվարի 6-ին:

ԻՆՉՊԵՍ ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑ ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՀԵՏ

Հեռավոր 1960 թվականին սովետական կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը ստանում է՝ Իտալիայի Սանտա-Չեչիլիա ակադեմիայի պատվավոր պրոֆեսորի կոչում: Ակադեմիան համարվում է աշխարհի ամենահին ու ամենահեղինակավոր երաժշտական հաստատություններից մեկը: Նման պատվավոր կոչման արժանանում են սովորաբար միայն այն երաժիշտները, որոնք իրապես նշանակալի ներդրում են ունեցել համաշխարհային երաժշտարվեստի մեջ: Երեք տարի անց միայն հայազգի մեծանուն կոմպոզիտորը կարողանում է ժամանել Իտալիա: Սանտա-Չեչիլիա ակադեմիայի ռեկտորը նրան առաջարկում է հանդիպել Հռոմի Հովհաննես 23-րդ Պապի հետ: Խաչատրյանն անմիջապես համաձայնում է: Եվ երեք օր անց՝ տիկնոջ հետ ժամանում է Վատիկան: «Արամ Խաչատրյանը Վատիկանը հիշում է որպես ահռելի մի շինություն՝ նման թանգարանի: Այն ժամանակ խորհրդային պետությունը հարաբերություններ չուներ Վատիկանի հետ, եւ Արամ Խաչատրյանն Խորհրդային Միության առաջին քաղաքացին էր, որ հանդիպել է Հռոմի պապի հետ: Նրանց զրույցը շարունակվել է մոտ կես ժամ: Ընդ որում, խոսել է ոչ միայն Սրբազան քահանայապետը: Ինչպես հետո հիշում է Արամ Խաչատրյանը, Պապը նրան բազմաթիվ հետաքրքիր հարցեր է տվել արվեստի վերաբերյալ»,- պատմել է Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի ղեկավար Արմինե Գրիգորյանը:

Այդ ժամանակ էլ Արամ Իլյիչը հանդիպում է Իտալիայի այն ժամանակվա նախագահ Անտոնիո Սենյիի հետ: Ի դեպ, նախագահ Սենյին անձամբ է հայազգի մեծանուն կոմպոզիտորին հրավիրել իրեն հյուր: Հանդիպմանը քննարկվել է ԽՍՀՄ-իտալական փոխադարձ համերգային տուրնեներ կազմակերպելու հարցը: Նախագահը հավանություն է տվել այդ գաղափարին, եւ շուտով այն կայացել է: Իտալիայցի ընթացքում նրան հրավիրել են նաեւ «Լա Ֆենիչե» թատրոն՝ ներկայացման: Երբ երգչախմբի դիրիժորն իմացել է, որ աշխարհահռչակ կոմպոզիտորն այցելելու է իրենց, հատուկ համար է պատրաստել. երգչախումբը դուրս է եկել ծրագրից եւ հատուկ Խաչատրյանի համար ողջույնի հանդիսավոր քայլերգ է նվագել: Դահլիճը ծափահարել է հոտնկայս: Ի դեպ, Իտալիան առաջին երկիրն է, որտեղ համերգային տուրնեով այցելել է Արամ Խաչատրյանը:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՀՈԳՆԵՑԻՆՔ, ԷԼԻ՞...

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Լսեցիք, չէ՞, ոչ մի մետրո էլ չի կառուցվելու: Գումարը հատկացրել են տրոլեյբուսներ գնելուն: Ընդհուպ՝ 45 հատ: Ավինյանն է ասել: Մարդը Երեւանի երթեւեկության բոլոր հարցերը լուծել է, մնացել է 45 տրոլեյբուս ավելացնի ու վերջնականապես երջանկացնի երեւանցիներին: Ես էլ

որ խոսում եմ, ասում եմ՝ հո դուք էշ չեք, արա, առանց այն էլ փողոցներում շարժվելու տեղ չի մնացել, վատամարդ եմ դառնում: ՔՊ-շնիկներն իսկույն անցնում են գրոհի՝ դու, ինչ է, դեմ ես, որ մեր քաղաքացիները կոմֆորտով երթեւեկեն, արժանապատիվ երթեւեկեն, քո ավտոն թող բակում կանգնած եւ մյուսների նման տրանսպորտով գնա աշխատանքի... Պոպուլիստ շանորդիներ, ուզում եք ասել, որ մետրոյի կայարան (ներ) բացելը ժողովրդի համար չէ՞, այդ նույն ժողովուրդն ավելի հարմար ու արագ տրոլեյբուսով կերթեւեկի, քան մետրոյով: Ես, ախր, ինձ համար չեմ ասում, մեր քաղաքացիների համար եմ ասում: Մետրո լինի՝ ես առաջինը կհրաժարվեմ իմ ավտոյից ու մետրոյով կերթեւեկեմ: Տեսե՞լ եք՝ ինչ է կատարվում Երեւանում... Ու այս պոռնոգրաֆիային դուք էլի 45 տրոլեյբո՞ւս եք ավելացնում:

Թողնենք՝ առավոտից իրիկուն ճանապարհներ սարքելուց կխոսեն: Երեւանում ձեր սարքած մի շրջանցիկ ճանապարհ ցույց տվեք: Մեռաք Մյասնիկյանի ասֆալտը քերելով ու նոր ասֆալտ փռելով: Առավոտից իրիկուն խցանում է: Գայի պողոտա՝ խցանում է, Հերացի՝ խցանում է, Խանջյան՝ խցանում է, Տիգրան Մեծ՝ խցանում է, Արշակունյաց՝ խցանում է, Գարեգին Նժդեհ՝ խցանում է, Կիեւյան՝ խցանում է, Սարալանջ՝ խցանում է, Ազատության՝ խցանում է... Ավինյանն այնպես է արել, որ քաղաքապետարանի առջեւի փողոցը բաց լինի: Ու Ավինյանի տանձին չի, թե որտեղ կներծծվի Արշակունյացից եկող մեքենաների հոսքը, որ շարժվում է դեպի օդանավակայան, կենտրոնական ավտոկայան, Արարատյան զանգված, Մալաթիա, Ծիծեռնակաբերդի խճուղի, Կիեւյան, Աջափնյակ, Լենինգրադյան, Շինարարներ... Ավինյանին ի՞նչ՝ իրեն բերում, գցում են քաղաքապետարան, ավտոն էլ կանգնեցնում հատուկ կայանատեղիում, մինչեւ գործերն ավարտի՝ տանեն տուն: Ինքն էլ մոռացել է, որ ժողովուրդն իրեն ասել է՝ մետրո կառուցիր, գնացել, տրոլեյբուս է առել: Ընդհուպ՝ 45 հատ:

Սրանք փող էլ կերած կլինեն, ես սրանցից ամեն ինչ սպասում եմ: Ասում են՝ մետրոյի համար նախատեսված գումարը տվել՝ տրոլեյբուս ենք առել: Իսկ ամեն տրոլեյբուսի մեջ ինչքա՞ն եք «մտել»: Հեռո՞ւ է ձեզնից: Օրական մի բարձրաստիճան պաշտոնյա է ազատվում աշխատանքից՝ կաշառք ու եսիմինչ ստանալու համար: Ասեք՝ կանենք... Ասում եմ՝ հրապարակեք յուրաքանչյուր տրոլեյբուսի համար վճարված գումարի չափը՝ ներառյալ տեղափոխման ծախսերը, ձեր գործուղումներն ու օրապահիկները եւ յուրաքանչյուր տրոլեյբուսի իրական գինը: Մի հատ համեմատենք, էլի՞: Ես կարգի խոսակցություններն Ավինյանին դուր չեն գալիս: Կանգնում, իր մի մատ հալով, ինձ ասում է՝ արդեն շատ ես լոճվում... Տո այ երես առած, այդ տրոլեյբուսներն իմ փողով ես առել, չէ՞, բա չիմանամ փողերս ոնց ես քամուն տվել, ով է վրայից թռցրել, ինչքա՞ն... Ու դեռ պետք է պարզել՝ էն խեղճ Նիկոլին մի բան տվե՞լ եք, թե՞ չէ: Այլապես, վարչապետ հալով ընկել՝ խանութ-մանութ է փակում, կանխիկ, անկանխիկ, ՀԴՄ... Ընկել էր հիստերիայի մեջ. «Էդ խանութը պետք ա չաշխատի...»: Հիմա հարցը սա է՝ երբ Ավինյանը «կռուպնի» փող է կպցնում մի տեղից, Նիկոլին բաժին հանո՞ւմ է, թե՞ չի հանում:

Չեմ կարող բացառել նաեւ այն տարբերակը, որ կառավարությունից են Ավինյանին հուշել՝ մետրո սարքելու փոխարեն տրոլեյբուս առնելու հանճարեղ գաղափարը: Դե, մետրոյի համար որոշվել էր «ֆիքս» գումար, դժվար էր այդ գումարից բան «պռճոկելը», լիքը ծախս կա անելու՝ Եկեղեցին ավերել, ընտրությունների պատրաստվել, վերարտադրության հարցը լուծել... Սոված փորով, դատարկ ջեբով ո՞ր մի ՔՊ-շնիկը կհամաձայնի Նիկոլի հետեւից քայլել: Չէ, պիտի քերել, ժամանակ չի մնացել: Շիրակի մարզում ջրամբարի շինարարությունն էլ կփակեն, Երեւանի մետրոյինն էլ, ակադեմիական քաղաքինն էլ, ապահովագրական ընկերությունների գումարներն էլ կկենտրոնացնեն իրենց ձեռքում, թոշակառուներից էլ «քեշբեկ» կպոկեն ու էլի լիքը աճպարարություններ կանեն, որ վերարտադրվեն:

Ձեռքներն էլ բռնող չկա: Իբր օրենքի երկիր է... Նախկինում գոնե գործում էր «գող՝ սիրտը դող» ճշմարտությունը: Հիմա դա էլ չկա: Ինչքան շատ են գողանում, այնքան շատ են լկտիանում, ինչքան շատ են լկտիանում, այնքան շատ են հաբռգում, ինչքան շատ են հաբռգում, այնքան շատ են լեզուները հանում... Թե բա՝ «արդեն լոճվում եք»: Բայց ասեմ, որ սա բնական երեւույթ է մի երկրում, որտեղ վերնախավ կոչվածը ձեւ է տվել իրեն, իբր պետություն է կառավարում, իբր անկախության կռիվ է տալիս, իբր խաղաղություն է բերում, իբր հասարակական տրանսպորտի աշխատանք է կարգավորում, իբր ճանապարհ է սարքում: Սրանց մոտ ամեն ինչ «իբր» է՝ «իբր դատախազ», «իբր դատավոր», «իբր արդարադատություն», «իբր նախարար», «իբր մարզպետ», «իբր օրենսդիր իշխանություն», իբր «Երեւանի քաղաքապետ», «իբր վարչապետ», «իբր ՔՊ»: Հոգնեցինք, էլի՞...

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 25.12.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԻՆՉՈՒ ԱԼԻԵՎԸ ՉՄԱՍՆԱԿՑԵՑ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՅԱՆ ՈՉ ՖՈՐՄԱԼ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դեկտեմբերի 21-22-ին Ռուսաստանի «հյուսիսային մայրաքաղաքում» տեղի ունեցավ երկու կարեւոր միջոցառում՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստը եւ ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների ոչ պաշտոնական գագաթնաժողովը: Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցել է այդ միջոցառումներին ու ԵԱՏՄ Տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի ժամանակ շնորհակալություն է հայտնել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւին՝ երկկողմ առեւտուր սկսելու պայմաններ ապահովելու համար:

Խոսքը վերաբերում է Ռուսաստանից 1050 տոննա ցորենի՝ Վրաստանի ու Ադրբեջանի տարանցմամբ Հայաստան տեղափոխելու մասին:

Սպասվում էր, որ ԱՊՀ ոչ ֆորմալ գագաթնաժողովին պետք է մասնակցեր նաեւ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Այդ մասին նախապես նաեւ հայտարարվել էր: Ու նույնիսկ Կրեմլի խոսնակ Դմիտրի Պեսկովն էլ, պատասխանելով Ալիեւին՝ այդ միջոցառմանը հնարավոր մասնակցության հարցին, պատասխանել էր, որ Մոսկվան սպասում է նաեւ Ալիեւի մասնակցությանը: Սակայն դեկտեմբերի 22-ին հայտնի դարձավ, որ Իլհամ Ալիեւը չի մասնակցելու այդ միջոցառմանը: Պաշտոնական պատճառաբանությունն աշխատանքային խիտ գրաֆիկն է: Դիվանագիտական ու քաղաքական կոռեկտությունը պահպանել էին հայտարարության մեջ, հատուկ նշվել էր, որ Բաքուն կարեւոր է համարում ԱՊՀ շրջանակում համագործակցությունը թե՛ բազմակողմ, թե՛ երկկողմ մակարդակներում եւ մշտապես մասնակցել է այդ կառույցի շրջանակում անցկացվող գագաթնաժողովներին: Ադրբեջանի՝ պետերբուրգյան հանդիպմանը վերջին պահին չմասնակցելը, բնականաբար, տարբեր խոսակցությունների առիթ տվեց: Շատերը ենթադրում են, որ, ըստ էության, ազդարարվեց ռուս-ադրբեջանական հարաբերություններում «նոր սառեցման» մեկնարկի մասին: Շատերն էլ փորձեցին դա կապել այն բանի հետ, որ Թուրքիայից երկօրյա այցով Բաքու էր ժամանել թուրքական բարձրաստիճան պատվիրակություն՝ Ջեւդետ Յըլմազի գլխավորությամբ: Այցը, ի դեպ, ավարտվել է դեկտեմբերի 24-ին: Ու ակնհայտ է, որ Ալիեւը նախապատվություն է տվել Թուրքիայի հետ հարաբերություններին, քան ԱՊՀ տարեկան ամփոփիչ ոչ պաշտոնական հանդիպմանը: Իհարկե, աչքաթող անել չի կարելի նաեւ ռուս-ադրբեջանական հարաբերություններում եղած խնդիրները, սակայն դրանք, ըստ էության, կարող են եւ հարթվել, ու պարզապես այժմ Բաքուն ավելի կենտրոնացած է որոշ հարցեր իր քաղաքական գծի մեջ վերաձեւակերպելու խնդրով:

Վաճառվում է Ռեյգանի եւ Գորբաչովի հանդիպման վիլլան

Շվեյցարիայում վաճառքի է հանվել Fleur d'Eau («Ջրային ծաղիկ») անվամբ վիլլան, որը գտնվում է Ժնեյան լճի մոտ: Այստեղ 1985 թվականին տեղի է ունեցել այն ժամանակվա աշխարհի երկու գերհզոր տերությունների առաջնորդների՝ ԽՍՀՄ ղեկավար Միխայիլ Գորբաչովի եւ ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանի հանդիպումը, որը մեծ դեր է խաղացել սառը պատերազմի ավարտի համար: Վիլլան արժե 29 միլիոն ամերիկյան դոլար: Վիլլայի մակերեսը կազմում է 1000 քառակուսի մետր: Այն ունի 12 սենյակ: Կառուցվել է բանկիրի պատվերով՝ 1867 թվականին: Ներկայում սեփականատեր հանդիսացող միջազգային ընկերությունը վիլլան ձեռք է բերել 1996 թվականին՝ մոտ 2 միլիոն դոլարով: Բացի առանձնատնից՝ վիլլայի կազմում նաեւ 1200 քառակուսի մետր մակերեսով պարտեզն է, որտեղից գեղեցիկ տեսարան է բացվում դեպի Մոնբլան լեռը:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am